

«Ոսկեղենիկ» մատենաշար - Ը

ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐԿՈՍԵԱՆ
ԽՕՍՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏՕՆԵԻՑ



Տպագրութիւն ԱՄՆ Արեւմտեան թեմի
Լոս Անջելէս - 2024

Ի ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏԵ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ ՎԵՅԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀՐԱՄԱՆԱԲ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒԽԱՂԵՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ
Տ. ՄԿՐՏՉԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒԽԱՂԵՄ
1872



Ученый Эксп. Ученый Эксп.

*Անհնար է, որ մարդ հոգևոր պաշտաման մէջ
զբաղիլ ուզէ, և «գործ չկայ» ըսէ:*

*Մէն մի հոգւոյ փրկութիւնն անգամ մեծ
խնամոց և հսկողութեան կը կարօտի:*

Մամբրէ Վրդ. Մարկոսեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«ԽՕՍՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏՕՆԵԻՑ»	6
ԳՐՔՈՅԿԻ ՎԵՐԱՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԲ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ՀԱՐՔ ԻՄ ԵՒ ԵՂԲԱՐՔ, ՊԱՇՏՕՆԱԿԻՑՔ	11
ԻՄ Ի ՔՐԻՍՏՈՍ	
Ա. ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ	15
Բ. ԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ	22
Գ. ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆ	45
Դ. ԱԳԱՅՈՒԹԻՒՆ	60
Ե. ԽՈՌՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ	76
Չ. ՊՃՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ	88
Է. ՕՐԻՆԱՅ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԹԻՒՆ	94
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԳԾԵՐ ՄԱՄԲՐԵ ԵՊՍ. ՄԱՐԿՈՍԵԱՆԻ ԱՍՈՅԹՆԵՐ ՄԱՄԲՐԵ ԵՊՍ.	106
ՄԱՐԿՈՍԵԱՆԻ	109
«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ՏՊԱԳՐՈՒԿԾ ԳՐՔԵՐ	110

«ԽՕՍՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏՕՆԷԻՑ» ԳՐՔՈՅԿԻ

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

«Զգիտեմ, թէ ինչո՞ւ Աւետարանի աշակերտքս այնչափ հեռացած ենք Աւետարանի շաւղէն, որ դէպի կեանք կ'առաջնորդէ»:

Մամբրէ Վրդ. Մարկոսեան

Աշխարհի մէջ երբ մարդկային ու քրիստոնէական արժէքներ խախտած են եւ մարդոց մէկ կարեւոր մասը մակերեսային ու անտարբեր դարձած է, ուստի բնաւ զարմանալի չեն թուիր վատ բարքերու եւ խոտորումներու բացայայտումները բոլոր անոնց կեանքին մէջ, որոնք կոչուած են ոչ միայն ատոնցմէ զերծ մնալու, այլեւ մանաւանդ ատոնց դէմ պայքարելու: Ազնուական քրիստոնեան ուրիշ ընտիր հանգամանքներէ զատ կ'ունենայ պատուոյ գեղեցիկ զգացումը, որով կ'ուզէ իր բարոյական կեանքը: Իսկ հոգեւորականի պարագային «առաւել եւս կրկնապատկուած է մեր վրայ՝ նախանձախնդիր լինել մեր պատուոյն եւ մեր ստանձնած պաշտօնի պատուոյն» (Մ.Վ.Մ.):

Երուսաղէմի 19-րդ դարու միաբաններէն Մամբրէ Վրդ. Մարկոսեանն իր «Խօսք Եկեղեցւոյ Պաշտօնէից» գիրքի ընդմէջէն յանդուզն կերպով կը բացայայտէ ապրելակերպ մը, որ կը թուի, թէ մտքի անկումի արդիւնք է, վանականներու անընդունելի վատ վարուելակերպը, որոնց նկարագիրն ու կոչումը կը սկսին

աղօտիլ՝ շղիմանալով ժամանակի կեանքի փորձութիւններուն:

Ամերիկայի Միացեալ նահանգներու Արեւմտեան թեմին կողմէ լոյս ընծայուած այս գիրքը կը խօսի հոգեւորականի կեանքի մասին: Այստեղ Մամբրէ Վարդապետ կ'անդրադառնայ հոգեւորականին յուզող տարբեր հարցերու եւ խնդիրներու, յորդորելով հաւատարիմ մնալ իրենց կոչումին եւ աստուածային կանչին: Խրատները նախատեսուած են հոգեւորական ընթերցողներու լայն շրջանակներու համար: Սրբակեաց Մամբրէ Վարդապետ պատուէրներու այս փունջը գրած է՝ մտահոգուելով հոգեւորականներու ուղիղ ու մաքուր վարքով: Այս գիրքը իր կառուցով, բովանդակութեամբ եւ լեզուով հարազատ արտացոլացումն է քրիստոնէական հաւատքին եւ հոգեւորականի կոչումին եւ անոր ապրած սրբակենցաղ կեանքին: Գիրքի ընդմէջէն հոգեւորականը կը հրաւիրուի առաւել եւս խորանալու իր կոչման մէջ, լաւ ճանչնալու իրեն վստահուած սուրբ առաքելութիւնը, միաժամանակ ճանչնալով իր տկարութիւնները եւ սրբագրելու զանոնք:

Անդրադառնալով «Խօսք եկեղեցւոյ պաշտօնէից»ի հրատարակութեան գրղապատճառներուն, իր գիրքի աւարտին հետեւեալը կը գրէ հեղինակը .- «Քանզի նկատելով եկեղեցւոյ պաշտօնէից վիճակը, տեսնելով անոնց բուն կոչման ներհակ բռնած ընթացքն ու առհասարակ սփռած գայթակղութիւններն ու քննելով շարժառիթները»: Մամբրէ Վրդ. կը ձգտի հոգեկործան որոմներէն հայ հոգեւորականը պաշտպանել, անոր նորատունկ

հոգին պարարտացնել աստուածաշնչական կենարար խրատներով, որոնց աղբիւրը զուլալ է, որովհետեւ կը բխի Սուրբ Գիրքի խորհախորհուրդ ընդերքներէն: Ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ.- Աստուծոյ շունչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, որպէսզի Աստուծոյ մարդը ըլլայ կատարեալ ու պատրաստ՝ բոլոր բարի գործերուն համար» (Բ. Տիմ. 3:16,17):

Մամբրէ Վարդապետ կը հրաւիրէ հոգեւորականը ինքզինք քննելու եւ իր կեանքն ու գործերը իր կոչման ու քրիստոնէական վարդապետութեան սկզբունքներուն հետ համահունչ դարձնելու, որովհետեւ, անոր բառերով, «այն ատեն միայն անմեղ եւ արդար կը լինենք, երբ զգաստ եւ օրինապահ լինենք: Մարդոց նման հոգեւորականը դժբախտաբար ինք եւս հակամէտ է վատթարանալու քան թէ՝ լաւանալու, կուրանալու քան թէ՝ առաջնորդելու, որոնց պատճառներն են հեղինակին բառերով հպարտութիւնը, անգիտութիւնը, անգործութիւնը, ազահութիւնը, խռովարարութիւնը, պճնասիրութիւնը եւ օրինազանցութիւնն են: Երբ քննենք ժողովուրդներու եւ ժամանակակից ընկերութեանց կեանքը, պիտի յօժարինք, որ բարոյական կեանքի օգնութեան բարերար ձեռքի մը կը կարօտին անոնք, եւ այդ ձեռքը տիպար ու իր կոչմանը տէր հոգեւորականին ձեռքն է:

Հոգեւորականին ստանձնած պաշտօնը շարտօներ զինք անհոգ մնալ, մանաւանդ երբ կը տեսնէ քրիստոնէական սրբութիւններու հանդէպ յարգանքի պակասը, հպարտութիւնը, անգթութիւնը, երկպառա-

կուլթիւնները ու բարոյական արժէքներու անարգումը, որոնք տիրած են ամէն տեղ:

Հոգեւորականը իր օրինակելի կերպարով եւ բարեխնամ ծառայութեամբ պարտի օգնութեան հասնիլ բոլորին: Հոգեւորականէն պահանջուածը ամբողջ ազգի կենաց համար զոհուիլն է, արիութեամբ գործելը, Մամբրէ Վարդապետի բառերով՝ «գործել խոհական խորհուրդով, գործել անսպառ երկնային սիրով, գործել՝ արդարութեամբ, բարի նպատակաւ եւ արդար ու սուրբ միջոցներով»:

Հետեւաբար, եկեղեցւոյ պաշտօնեան առաքինութեան, սրբութեան, բարի վարուց, սիրոյ եւ խաղաղութեան՝ բանիւ եւ գործով օրինակ պիտի հանդիսանայ իր հօտին, որ երգմամբ ուխտած է անթերի կատարել իր պարտքերը, հեռու մնալով ու վանելով անհոգութեան ու պարտազանցութեան հոգեբանութիւնը: Վերջապէս, հեղինակը կը հրաւիրէ մեզ սիրով կարդալու գրքոյկը որպէսզի «ըստ ամենայնի խելամտելով դարման տանիք, յօգուտ մեր անձին եւ մեր խնամոց յանձնուած ժողովրդոց»:

Մեր փափաքն է, որ Ամերիկայի Միացեալ նահանգներու Արեւմտեան Թեմին կողմէ վերահրատարակուող այս գիրքը, որ կը հաւատանք իւրայատուկ նուէր մըն է հեղինակին կողմէ՝ ձօնուած իւրաքանչիւր հայ հոգեւորականի ու ընթերցողի, դառնայ ազգակ ինքնաճանաչման եւ ինքնասրբագրութեան:

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Առաջնորդ ԱՄՆ Արեւմտեան Թեմի

ԵՐԿՈՒ ԽՕՍԳ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՇՏՕՆԷՒԹ ՈՒՂՂՈՒԱԾ^(*)

ՀԱՐՔ ԻՄ ԵՒ ԵՂԲԱՐՔ.

ՊԱՇՏՕՆԱԿԻՑՔ ԻՄ Ի ՔՐԻՍՏՈՍ

ԱՄԵՆԱՅՆ խոնարհութեամբ և սիրով Հոգւոյն կ'աղաչեմ և արտասուօք կը խնդրեմ, շնորհք ըրէք, կարդալու արժանի համարեցէք ձեր յետին պաշտօնակցին այս տկար խօսքերը, որք կալե՞ր խոցուած սրտէ մը կը բողբոսին և որք, եթէ սիրով և աւանց արհամարհանաց ընդունուին յուսամ յԱսունուած թէ օգտակար կը լինին:

Գիտեմ և կը խոստովանիմ, որ ձեզմէ շատերը հմուտ էք ամենայնի, և

(*) Եկեղեցւոյ պաշտօնեայ ըսելով կը հասկնանք ամեն աստիճանի Եկեղեցականք, փոխառաց չպիրէն սկսեալ մինչև յկաթողիկոս:

Մէկ էջ Մամբրէ Վրդ. Մարկոսեանի գրքի 1872 թ.
հրատարակութիւնից:

ՀԱՐՔ ԻՄ ԵՒ ԵՂԲԱՐՔ,
ՊԱՇՏՕՆԱԿԻՑՔ ԻՄ Ի ՔՐԻՍՏՈՍ

Ամենայն խոնարհութեամբ և սիրով ս. հոգւոյն կ'աղաչեմ և արտասուօք կը խնդրեմ,- շնորհք ըրեք կարդալու, արժանի՛ համարեցէք ձեր յետին պաշտօնակցին այս տկար խօսքերը, որ կարեվէր խոցուած սրտէ մը կը բղխին և որ, եթէ սիրով և առանց արհամարհանաց ընդունուին, յուսամ առ Աստուած, թէ օգտակար կը լինին:

Հա՛րք իմ, գիտէք դուք անշուշտ, որ ամենքս ալ իբրև մարդ և իբրև անդամ մարդկութեան պարտքեր ունինք, իսկ իբրև եկեղեցւոյ պաշտօնեայ՝ կրկնապատկուած է մեր պարտքը: Արդար մարդը կը փութայ անթերի կատարել իր ստանձնած պարտքը՝ առանց իրաւունքէն զրկուիլը հոգալու: Արդ չգիտեմ՝ ի՞նչ ընելու է այն մարդը, որ իրաւունքը կը ստանա, բայց պարտքը կը զլանայ:

Մեր ստանձնած պաշտօնը, Հա՛րք իմ, չի ներեր մեզ անհոգ լինիլ. ո՛հ, սրտերնիդ չի՞ շարժիր, երբ կը տեսնէք, որ քրիստոնեական անմեղութիւնը և սրբութիւնն աղարտուած է ժողովրդեան մեջ, հեզու-

թիւնը՝ իրարու դէմ կատաղութեան փոխուած, գթասիրութիւնը՝ անգթութեան, համաձայնութիւնը՝ երկպառակութեան, խաղաղութիւնը՝ խռովութեան, ամէն տեսակ բարեմասնութիւնները եթէ չըսեմ սպառած՝ գոնէ կիսով չափ պակասած են, որով խեղճ ժողովուրդը մոլորած ու ցնորած՝ ինչ ընելը չգիտեր, խորհրդակորոյս ազգի մը պէս շինելու տեղ կը քանդէ. զիկքը կեղեքող աւազակին առջև անշարժ կը կենայ, լուռ ու մունջ կը հեծէ, և հարստահարիչը կորսուելէն վերջը աղաղակ կը բառնայ: Սակայն երբ բարեխնամ ձեռք մը իրեն օգնութեան հասնի, երկիւղէն ու շուարումէն - Ինձ վնասող չկայ - կ'ըսէ: Այս դառն, այլ ճշմարիտ իրողութիւնը մտաւոր հիւանդութիւն մը է, իմացականին խանգարումն է, որուն պատճառը եթէ անաչառ հետազօտենք, մեր չափազանց ինքնասիրութեամբ ստացած անհոգութիւնն է, և որուն դարմանը իրաւամբ մեզմէ կը սպասուի:

Պէտք է մտածել, Յա՛րք իմ, ահռելի ատեան մը ունինք, ուր պատասխանատուութեան պիտի հրաւիրուինք և այնտեղ բազմող դատաւորը իր անչափ մարդասիրութիւնը, գթութիւնը, ողորմութիւնը, ներողութիւնը և անյիշաչարութիւնը կատարած լինելով՝ արդարութիւն պիտի գործադրէ: Այնտեղ ամէն բան մերկապարանոց է. մթութիւն կամ

մոռացումն չկայ, հոգւոյ կարողութիւնները պայծառ, խիղճն ու յիշողութիւնը՝ արթուն և լուսաւոր են, վկայի, փաստաբանի և կաշառքի ոչ կարօտութիւն կայ և ոչ կարևորութիւն: Հոն յաւիտենական բարւոյն առջև չարերը ամօթապարտ պիտի լինին և ծածկուելու խորշ անգամ չպիտի գտնեն: Անոց համար արդար պատուհասէ զատ ուրիշ ակնկալութիւն չկայ, այս ճշմարտութիւն մըն է:

Եթէ մենք իրօք ճշմարիտ քահանաներ և հովիւներ լինելու համար այս պաշտօնը յանձն առինք, պետք է անոր պարտքերը սորվինք և անթերի կատարենք, ինչպէս որ կը պահանջենք մեզ սպասաւորողներէն: Եւ ի՞նչ ենք մենք, եթէ ոչ Աստուծոյ եկեղեցւոյն պաշտօնեաները, հաւատացելոց սպասաւորները, Աստուծոյ գերդաստանին վրայ կարգուած տնտեսներ, որ ժամանակին անոց հոգևոր կերակուրը տալու պաշտօնն ու պարտաւորութիւնը ունինք: Ի՞նչ կընենք մենք՝ երբ մեզ սպասաւորող եղբայրը իր պարտուց կատարման մէջ անհաւատարիմ և իր գործոց մէջ անհոգ գտնուի. ո՞չ ապաքէն կը խրատենք, կը յանդիմանենք, կը պատժենք և վերջապէս կը վանենք. շատերս այսքան համբերութիւն ալ չենք ըներ: Ուրեմն ի՞նչ կը յուսանք, քանի որ մենք ալ նոյնպէս մեր պարտքերը կատարելու մասին իսպառ կը թերանանք Աստուծոյ անհուն

մեծութեան առջև. անշուշտ օր մը որ շատ հեռի չերևիր, պիտի ընդունինք մեր արդար հատուցումը:

Ես և սարսուռ կը զգամ ամէն անգամ, Յա՛րք իմ, երբ սուրբ եկեղեցւոյ պաշտօնէից վրայ անլուր ամբաստանութիւններ կը կարդամ, կամ այնպիսի գործեր կը լսեմ, որոնք հեթանոսաց մէջ անգամ անարգ են և խոտելի. անհաւատ կռապաշտից մէջ անգամ դատապարտելի եղած գործեր քրիստոնէութեան մէջ տեսնե՛լ, արդարև աններելի է, մանաւանդ եկեղեցւոյ պաշտօնէից մէջ, որոնք առաքիլութեան, սրբութեան, բարի վարուց, սիրոյ և խաղաղութեան՝ բանիւ ու գործով քարոզ և օրինակ հանդիսանալու սահմանուած են, որոնք յօժարութեամբ սոյն պաշտօնին մէջ մտեր են, որոնք երդմամբ և ուխտիւք զայն յանձնառած են՝ կենօք և մահուամբ անթերի կատարել: Մի՛ գուցէ մեկերնիս ըսինք, թէ «տե՛ս, այս կարգէն չեմ ես», ո՛չ, սխալմունքնիս այն ատեն մեծ կը լինի, երբ այլոց խրատուած ու յանդիմանուած ատեն մենք մեզ բացառութիւն սեպենք, և ահա այն ատեն մենք անուղղայներ կը համարուինք:

Ա.
ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Անուրանալի է, որ երբ մարդ բարոյականի ուղիղ ճանապարհին կը շեղի, հարկաւ ամէն տեսակ մոլութեան եւ մոլորութեան կը մատնուի, ուստի զարմանք չէ, երբ եկեղեցւոյ պաշտօնէից վրայ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ, ամբարտաւանութիւն եւ գոռոզութիւն կը տեսնուի: Քանզի հերիք է, որ անոնք իրենց բուն կոչումէն մագի չափ շեղին, ալ այնուհետեւ ամէն չարիք կը յուսացուի:

Հպարտութիւնը սաղայելական կիրք մըն է, որուն գերի եղողը ծաղր ու ծանակ է ամէն մտացիներու, որչափ խրոխտայ այլոց վրայ, որչափ զայլս մերժէ եւ արհամարիէ, այնչափ ալ ուրիշին ծաղրը կը շարժէ իր վրայ եւ արհամարհանաց կենթարկի, ինքն որչափ ուրիշ իրմէ աւելի արժանաւորներուն անծին, խօսքին, գործքին եւ արդեանց չհաւանի ու բանի տեղ չընէ, այլք եւս զնա ինքն կը նախատեն, կայպանեն եւ զգուանօք կատեն. որ եւ արժանի իսկ է ատելութեան, քանզի հպարտը թշնամի է եւ ատելի Աստուծոյ:

Հպարտին բնութեան եւ ընթացքին նայելով պետք էր նա հեռանար, առանձնանար եւ մարդկային ընկերականութենէ դուրս ապրեր, քանզի նա կ'ատէ ինչ որ իրմէ դուրս է. տիեզերաց մէջ ինքն է միայն արժանաւոր, գիտուն, բարի, արդար եւ սուրբ, ուստի հարկ էր, որ փախչէր եւ միայնիկ, ինքն իր վրայ զմայլած ապրեր առանձին եւ գործեր ու մեռներ առանձին: Ինչու՞ ուրեմն հպարտը տակաւին կը զիջանի մարդկան մէջ մնալ, վասն զի փառասեր է եւ գովեստի ու փառաւորութեան կը ցանկայ, եւ աշխարհի մէջ չեն պակսիր անմիտ կեղծաւորներ, որ հպարտին վրայ զարմանան, զմային եւ զայն աստուածապէս գովեն ու փառաւորեն, եւ հպարտին հաճելի ու խիստ հեշտալի է կեղծաւոր շրթունքներէ դուրս ծխած, նեխեալ, դրուատեաց խունկը, որ որչափ մահառիթ է իրեն, այնչափ ալ սիրով, յօժարութեամբ եւ բուռն բերմամբ կը մղուի դէպ յայն՝ ինչպէս թիթեռնիկը ճրագին...:

Հպարտը խռովայոյզ ալ կը լինի, քանզի կ'ատէ եւ կարհամարիէ ամէն բան, չհաւանիր ոչ մարդու եւ ոչ անոնց գործոց, որով զայրոյթ, յուզումն եւ խռովութիւն կը գրգռէ: Նա իրական առաքինութիւն եւ բարձր արժանաւորութիւն չունենալուն համար սնապարծութեան հողմով կուռի եւ կը փքանայ, եւ այսպիսեօք առանց արժանաւորութեան վարկ ու

համբաւ ստանալ կը ճգնի: Բայց ի՞նչ լաւ անօրինած է բնութեան Արարիչը, որ հպարտը միշտ իր բարձրութենէն անկանելով կը ցածնայ եւ կը խորտակի, եւ այս իր արդար պատուհասն է, ինչպէս արդէն ըսինք, աստուածային օրինաց դէմ մեղանշելուն պատիժն իր մէջն է:

Ինչպէս ամէն մոլութիւն, նոյնպէս եւ հպարտութիւնը, բնական ու բարոյական օրէնքէ դուրս է: Հպարտութիւնը այնքան չար ու գայթակղելի մոլութիւն մըն է, զոր կրող պաշտօնեայն բարոյապէս պաշտօնէ դադրած կը համարուի, եւ երանի թէ իրապէս ալ դադարած լինէր: Քանզի հպարտութիւնը Սաղայելի յատկութիւնն է, իսկ խոնարհութիւնը Քրիստոսի. արդ ի՞նչ կարելի է Քրիստոսի աշակերտ ըլլալէ, ինքնին դադրած է, ալ ոչ խօսքը, ոչ արտաքին ձեւը եւ ոչ մարդելուդաց ծափահարութիւնը չեն կարող զայն ճշմարիտ պաշտօնէի կարգն անցընել, ուստի լաւ է, որ իսպառ դադարի:

Զգիտեմ, թէ ինչու՞ Աւետարանի աշակերտքս այսչափ հեռացած ենք ավետարանի շաւղէն, որ դէպի կեանք կառաջնորդէ: Մեր Տէրը եւ վարդապետը հեզութեան ու խոնարհութեան ճամբով եկաւ եւ մեզ նոյն ճանապարհին մէջ դրաւ, մենք նորա խօսքերն ու գործոց օրինակները փոխանակ մեր անձին վրայ կրելու, զանոնք ծեսերու եւ արարո-

ղութեանց փոխելով միայն ի տես կը կատարենք եւ արդարութիւն կը համարինք, ինչպէս հին Փարիսեցիները Նորա ԽՕՍԲԸ մեր վարքով թագաւորեցնելու տեղ, կանարգենք զայն եւ կըստեղծենք այնպիսի կամահաճ բաներ, որովք կը տանջուինք հոգւով եւ մարմնով:

Յիսուս Քրիստոս մեր անձին հանգստութիւնը հեղութեան ու խոնարհութեան մեջ ցոյց տուաւ. «Սորվեցեք ինձմէ հեզութիւն ու խոնարհութիւն, որպէսզի ձեր անձին հանգստութիւնը գտնէք»: Իսկ մենք ընդ հակառակն, չգիտեմ ինչի՞ համար կը հպարտանանք եւ մեր կրից գերի կը լինինք, հանգստանալու համար կը գոռոզանանք եւ չարաչար տանջանաց կը մատնուինք: Բարձրանալու սանդուխ՝ խոնարհութիւնն ու առաքինութիւնը ցոյց տուաւ Յիսուս, իսկ մենք կուզենք հպարտութեամբ եւ մոլութեամբ բարձրանալ, եւ սակայն միշտ կը խոնարհինք, կը ցածնանք եւ կանարգուինք: Յիսուս ըսած է. «Անձը խոնարհեցնողը պիտի բարձրանայ, եւ բարձրացնողը պիտի խոնարհի», այլ մենք կարծես սորա ճշմարտութեան վրայ տարակուսած, կուզենք փորձել, եւ սակայն ամէն ժամանակ մեր փորձերովն իսկ ճշմարտութիւնն ստուգած ենք ու տակաւին չենք համոզուած, թէ երկնաւոր Վարդապետին ամէն ըսածները

յաւիտենական ճշմարտութիւններ են. «Երկինք եւ երկիր կարող են անցնիլ, բայց Նորա խօսքերէն Նշանախեց մը անգամ չէ կարելի անցնիլ: Նա ըսած է. «Ես հեզերուն ու խոնարհներուն մէջ կը բնակիմ», իսկ մենք ամբարտաւանութեամբ զայն մեզմէ կը հեռացնենք, ու մենք ալ իրմէ կը հեռանանք, ինչպէս իմաստունն ալ կըսէ. «Ամբարտաւանութեան սկիզբը Տիրոջմէն հեռանալն է, որովհետեւ Նորա սիրտը Արարչէն խոտորեցաւ»:

Նայեցէք սա ամբարտաւան մարդոյն վրայ, որ տնքալով, խրոխտալով եւ գլուխը վեր ցցած երկու կողմին վրայ ճոճալով կը քայլէ, կեղծաւորներէ շրջապատեալ՝ չորս կողմը արհամարհական Նայուածքներ կը նետէ, քովիներուն կակնարկէ, որ գան թելերուն տակ մտնեն առանց հարկի, միայն թէ փառաւոր երեւի եւ ուշադրութիւն գրաւէ: Հագիւ ուրեմն կը զիջանի թշուառի մը հետ խօսելու՝ զայրութիւ, խրոխտանօք եւ լի անարգութեամբ: Տեսէ՛ք, սա մի կողմէն կարեկցութեան եւ միւս կողմէն զգուանաց արժանի տեսարանը. թշուառը հպարտին ոտքն ինկած կողկողագին եւ արտասուալիր աչօք դեպ անոր կը նայի: Նորա քարացեալ սիրտն ողորբելու եւ թերեւս աչքերէն ու երեսէն գուշակելու Նորա ներքին զգացմունքը եւ հոգւոյն հանգամանքը եւ անտի հետեւցնելու իր խնդրոյն

վախճանը: Բայց ամբարտաւանին դաժան աչքերը անողօք դահճի մը աչքերուն կը նմանին, կատղած վագեր նման յօսից ծայրերն իրար միացեր եւ աչաց կոպերուն վրայ են ինկեր, աչքերը խոժոռ ու անդադար շարժուն, դեմքը դաժան ու կնճռոտ, բայց կերելի, թէ գոհ է այս տեսարանէն, քանզի անձամբ շարժումն չընէր թշուառը մերժելու եւ կամ պատժելու, կերելի, թէ հաճոյք կը զգայ նորա այն աստիճան խոնարհելէն, կը հեշտանայ նորա համբոյրներէն, որ անդադար ոտքերուն կը մատուցանէ եւ կերելի, թէ կը փառաւորի զայն ոտիցն առջեւ տարածեալ տեսնելէն, ներքնապէս կը զմայլի այս ամենուն վրայ եւ դիւային ուրախութեամբ կը բերկրի, այլ թշուառին ինդիրը ոչ կը լսէ եւ ոչ կը կատարէ: Սակայն աւա՛ղ, որ չլսեր նաեւ այն բեկեալ սրտէն, փառքէն, խորխտանքէն եւ բռնութենէն կը սոսկայ ժողովուրդը եւ փոխանակ աներկմիտ վստահութեամբ մօտենալու եւ իր կարօտութեանց մէջ լի երկնային սիրով եւ անկեղծ համարձակութեամբ անոր ներկայանալու, կը դողայ, ետ կը քաշուի, նորէն յառաջ կը մղուի երկիւղիւ եւ սարսափմամբ, հազար անգամ ձեռքը կը համբուրէ կամ ոտքը կանկանի: Այս ոչ եկեղեցականութիւն է եւ ոչ ժողովրդականութիւն. այս արտաքոյ է մարդկութեան եղբայրական պայմանին եւ օտար՝ եկեղեցւոյ

պաշտօնէին ու ժողովրդեան մէջ եղած սուրբ առնչակցութեան օրէնքին, որ է օրէնք հայրական եւ որդիական սիրոյ, օրէնք խաղաղութեան, բարութեան, գթութեան, խոնարհութեան եւ հեգութեան այս օրէնքէն եւ այս սկզբունքէն դուրս կրօնաւորութիւն չկայ, այս պայմաններէն դուրս եկեղեցւոյ պաշտօնեութիւնը աննշան, կրօնաւորութիւնն աննպատակ, եւ ժողովուրդը զեղծեալ եւ անուղղայ կը լինի:

Եթէ կուզենք փառք ժառանգել, պէտք է ճշմարիտ փառաց փափաքինք, որ համեստութեան, խոնարհութեան եւ չափաւորութեան մէջ է. ճշմարիտ փառքը չի գտնուիր հարստութեան, գոռոզութեան եւ շքեղագարդ երեւելի հանդերձներով պճնագարդելու մէջ. միմիայն անթերի պարտակատարութեամբ կարող է մարդ արժանաւորիլ ճշմարիտ փառաց:

Բ.
ԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ

Որեւէ գործ կամ ծառայութիւն ըստ օրինկ կատարուելու համար յարմար պաշտօնեայ կը պահանջուի, ո՞րչափ ևս առաւել հոգևորակա՛ն պաշտօնը, որ բարձր է քան զայնս և հարկեցուցիչ: Արդ՝ ո՞ր մէկս կարող ենք վստահութեամբ ըսել, թէ մենք սոյն վսեմ պաշտօնին արժանաւոր ենք և անոր պատկանած հանգամանքներն ունինք. ծառը իր պտուղէն և գործը իր արդիւնքէն կը ճանչցուի:

Ահաւասիկ մեզյանձնուած ժողովրդեան վարքը, անոնց բարոյական ու մտաւոր կեանքը դատախազ կանգնած կը բողոքէ մեր ստուրթեան դէմ. մեզ աշխարհի առջև, մեր ամենաբարի Արարչին առջև կ'ամբաստանէ իբրև անհաւատարիմ տնտեսներ, իբրև անհոգ և անձնասէր հովիւներ, իբրև կոյր առաջնորդներ: Ո՞ր մէկերնիս կարող ենք համարձակ ըսել Առաքելոյն պէս, թէ «Իմաստուն ճարտարապետի մը պէս հիմն դրի». ի՞նչպէս կամ որո՞ւ կրնանք ըսել. թէ «Գործ իմ դուք էք ի Քրիստոս». քանի որ աւելի քանդիչ կը յօժարիւք լինել մեր անգիտութեամբ, քան թէ շինող: Բայց պետք է գիտ-

նանք, որ մեր ՏԵՐը մեզ տուաւ ժողովրդեան «Ի շինել և ոչ ի քակել»:

Յիսուս Քրիստոս աշխարհի փրկիչը, մեր ՏԵՐը և երկնաւոր վարդապետը մեզ «աշխարհի լոյս» կ'անուանէ, բարձր աշտանակի վրայ գրուող, իսկ տունը, այսինքն Աստուծոյ ժողովուրդը՝ «լուսաւորող ճրագ» կը կոչէ, լերան վրայ կեցող քաղաքի կը նմանցնէ: Այս անունները, նմանութիւնները և այս վսեմ տիտղոսները, որոնց մէջ մեր պաշտօնն ու պարտաւորութիւններն ալ բովանդակուած են, չե՞ն յանդիմաներ ու պատկառեցներ մեզ, քանի որ մենք այնպիսիներ չենք. բուն իսկ մեր պաշտօնը և կոչումը չգիտնալնիս կամ ըստ այնմ չգործելնիս յայտ յանդիման չի՞ խայտառակեր մեր անգիտութիւնը:

Եթէ մենք մեզ պիտի խաբենք մեծխօսիկ սնտիաբանութեամբ, եթէ սուտ անուն գիտութեամբ և յամառ վիճաբանութեամբ պիտի երևինք, որոնք կարող են մեզ հպարտացնել և Աստուծոյ Հոգին շիջուցանել, եթէ լոկ մտաւոր և նիւթական գիտութեամբ պիտի պարծինք առանց աստուածային գիտութեան, առանց սրտի մշակութեան և բարուց ուղղութեան, արդարև ողորմելի ենք քան զամենայն մարդիկ, քան զանբանս և քան զանզգայս, որոնք գոնէ բնութեան օրինաց հնազանդ են:

Այլ մենք կը պարտաւորինք գիտնալ այն գիտութիւններն հոգևորին և բարոյականին համար, առանց որոյ մեռած են անոնք և ապականիչ են մտաց, հոգւոյ, մարմնոյ և կենաց. սորա ապացոյցը, թէև բազմաց վրայ կը տեսնենք, առաւել մեր վրայ ակն յանդիման կ'երևի. քանզի ի՞նչ է մեր ապշութեան պատճառը, ինչէ՞ն է մեր ամենօրեայ մտաց, սրտի և մարմնոյ չարաչար տագնապը, ի՞նչ է մեզ դէմ յարուցուած հակառակութեան և ատելութեան առիթը, եթէ ոչ՝ մեր անգիտութեամբ մեր բուն կոչումէն շեղիլը: Ի՞նչ է ժողովրդեան այսչափ յուզումն ու երկպառակութիւնը,- անշուշտ մեր անգիտութեամբ սոյն պաշտօնին անյարմար և անարժան գտնուիլը: Ինչէ՞ն է, որ Աստուծոյ ժողովորդը վիատած, հաւատքէն թուլցած, յոյսը կտրած և յաստուածային խաղաղարար սիրոյն հեռացած է,- անշուշտ մեր անգիտութենէն, որով ամէն բան տակն ի վրայ եղած է և եղծումն ու զեղծումը ամենուրեք տիրած է:

Սակայն Յա՛րք իմ, այս անմիաբանելի ներհակութիւն մըն է, Աստուծոյ պաշտօնեա՛յ, եկեղեցւոյ առաջնորդ, ժողովրդեան հովի՛ւ և մտաց խաւարելոց լոյս ըսուիլ, ու անգէտ լինի՛լ. այս անլուծանելի հակասութիւն է, և այս ընդհանուր անկարգութիւնը բուն ասոր համար է, որուն պատճառ ու պատաս-

խանատու ենք նախ մենք, որ առանց մեզ քննելու՝ հետամուտ կը լինինք այնպիսի պաշտօնի մը, զոր չպիտի կրնանք ըստ օրինի ի գլուխ տանիլ. և երկրորդ մեզ ընտրող հաւանող և ձեռնադրողը, որ առանց մեր ամեն հանգամանաց, կատարելութեանց կամ թերութեանց հասու լինելու, ինչ-ինչ նկատմամբ և թելադրութեամբ կը յօժարի ձեռք դնել մեր վրայ և կցորդ լինիլ մեր ամեն չարեաց ու անոնցմէ հետևելիք բոլոր գայթակղութեանց: Քանզի այնուհետև կը մտնանք Աստուծոյ տան մեջ, և չգիտնալով այնտեղ շարժելու կերպերնիս, մեր արդէն ունեցած բազմաթիւ թերութեամբ չար օրինակ կը դառնանք անմեղներու, որոնց արիւնը մեզմէ պիտի պահանջուի:

Լուրջ նկատողութիւն մի, Յա՛րք իմ, սուր ակնարկ մը ձգենք մեր անձին, մեր խորհրդոց, մեր կրից և մեր գործած կամ այլոց գործել թելադրած իրողութեանց վրայ. ինչպէս զայլս կը դատենք նոյնպէս ալ մեզ դատենք, և ահա պիտի տեսնենք, որ ի մեզ կարծուած լոյսը խաւար է,- հապա մեզմէ լուսաւորիլ ուզող խաւարը ո՞րչափ խաւար պիտի մնայ: Մեր անաչառ անձնադատութիւնը պիտի յայտնէ մեզ, որ մենք աշտանակի վրայ դրուած լուսաւոր ճրագներ չենք, մեր պարզ զննողութիւնը ցոյց պիտի տայ, որ մենք աշխարհի առջև պարզ

երես երևնալու և ճակատաբաց տեսնուելու արժանի՝ լերան վրայ շինուած քաղաք չենք, այլ մեզ կարևոր եղած գիտութիւններէն զուրկ՝ խաւարի մէջ խարխափող, մոլութեանց և մոլորութեանց բաւղին մէջ թաքչող և ստութեան ու խաբէութեան պատրուակին տակ ծածկուած գործողներ ենք: Եւ ահա այս ամէնը պիտի ապացուցանեն, որ մենք ինչ որ պէտք էր լինէինք՝ այն չենք, արտաքուստ տարբեր, և ի ներքուստ տարբեր, երևոյթով ուրիշ և իսկութեամբ՝ անոր ներհակն ենք, մենք ճշմարտութեան աշակերտներ ենք, իսկ մեր այս գրութիւնը ճշմարտութեան հակառակն է. սակայն ամօթ այն մարդուն, որ ստութեան ներքև սողալու չափ կը ցածնայ, և առաւել ևս ամօ՛թ, վա՛յ և հազա՛ր նախատինք այն կրօնաւորին, որ ընդ պատրուակաւ գործելու ցածութեան կը զիջանի և այսպիսի վատութեան նախատինքը կրելու յանձնառու կը լինի:

Յիսուս Քրիստոս իրեն հաւատացողներուն պատուիրեց. «Այնպէս լուսաւոր պէտք է լինի, ըսաւ, ձեր լոյսը, որ մարդիկ տեսնելով ձեր բարի գործերը՝ փառաւորեն ձեր երկնաւոր Յայրը»: Այս պատուերը եթէ իւրաքանչիւր քրիստոնէայ պարտաւոր է պահել և կատարել իբրև Աստուծոյ ժողովուրդ, իբրև երկնաւոր Յօր որդիք, հապա ո՞րչափ ևս առաւել

եկեղեցւոյ պաշտօնեայները, որոնք մեծամեծ անուններ վրանին առնուլ չեն վարաներ:

Դայեակ կ'անուանուին, բայց հոգևոր կաթով իրենց սաները չեն սնուցաներ, քանզի չունին և չեն գիտեր:

Չովիւ կը կոչուին, բայց ժողովուրդն ի պարարտ արօտս և ի կենսատու մարգս ակետարանական ճշմարտութեան չեն հովուեր և առ ջուրս հանգրստեան շնորհաց սուրբ Չոգւոյն չեն մակաղեր, և ի փարախ երկնապարգև խաղաղութեանն Յիսուսի չեն ժողովեր:

Չայր կ'անուանուին, բայց չեն խնամեր, չեն գգուեր ու դարմաներ իրենց հոգևոր որդիքն ի Քրիստոս, քանզի հայրութեան ինչ լինելը չեն գիտեր:

Մենք դաստիարակ, ուսուցիչ և վարդապետ կը կոչուինք, շատերս այս ալ հերիք չսեպելով առաւել բարձրանուններու կը ցանկանք... Եւ ահա մենք անգետ և անիմաստ ենք, որով ուսուցանելու պաշտօնն իսպառ բարձիթողի ըրած ենք, կամ պետք եղածը չենք ուսուցաներ՝ ոչ Աստուծոյ տաճարին մէջ, ոչ կրթութեան յարկերու մէջ Աստուծոյ խօսքը կը քարոզենք և կ'ուսանինք, այլ բարձրամտութեամբ կը պանծանք իբր օրէնսգետ, իմաստուն և ժողովուրդ հովուելու ձեռնհաս: Անարժան միջոցներով պաշտօններ կը շորթենք և մեր պաշտօ-

Նատեղին հասած օրերնէս մեր թշուառութիւնը երևան կուգայ, քանզի բացի ցուցամոլութենէ, մեզ չինկած գործերու մեջ կը նետուինք և իրաւամբ խայտառակ կը լինինք: Լսենք Մարգարէին, Յարթ իմ, որ Աստուծոյ կողմէն ազդարարութիւն կընէ մեզ, որոյ զանցառութենէն հետևած անարգութիւնը ամէն ժամանակ կը կատարուի. «Քահանային շրթունքը, կ'ըսէ, պէտք է գիտութիւն պահպանէ, գիտութիւն ստանալու հոգ տանի, և ժողովուրդը նորա բերնէն օրէնքներ պիտի խնդրեն. ինչու որ քահանայն ամենակալ Աստուծոյ պատգամաւորն է»:

Ո՛վ սիրելի Յարթ իմ, մեր բուն պաշտօնը ուսուցչութիւնն է. «Ոչ է բարութեմ մեզ թողուլ զբանն Աստուծոյ և պաշտել զսեղանս»: Յապա մենք ո՞ր թողած ենք մեր այս սուրբ ու նուիրական պաշտօնը, այս վսեմ պարտաւորութիւնը: Վայելա՞ծ ենք կամ զգացած ունի՞նք երբէք այն քաղցր ու երկնային բերկրանքը, այն համեստ ու սուրբ ուրախութիւնը, զոր կը մատուցանէ անարատ և ողջամիտ ուսուցչութեան արդիւնքը: Տկար արարած մը զօրացնել հոգևով, խաւար միտք մը լուսաւորել ճշմարտութեամբ, գայթակղած ու մոլորած քայլ մը ուղղել դէպի արդարութիւն, սրբութիւն և ի բարութիւն, մէկ խօսքով աշխարհի վրայ անմուտ արփի ըլլալ,

ապագայ սերունդին նախախնամը՝ կազդուրիչը և փրկիչը լինել, արդարև մեծ են ասոնք, ինքնին փառաւոր են, գլխովին պատուաւոր և վսեմ, զոր ճանչնալու և որոյ քաղցրութիւնն զգալու համար կատարել պէտք է: Այնպիսի վեհութիւններ են, զորս խօսքով լիովին բացատրել եթէ չըսեմ անհնար՝ գոնէ ինձ համար խիստ դժուար է. ես միայն խորհելով զմայլի գիտեմ, նման այն գեղջուկ մարդուն, որ առաջին անգամ իր մուր խրճիթէն ելած մարդաշատ ու վաճառաշահ քաղաք մը կը մտնայ, ուր ամէն կողմ՝ նորանոր տեսարաններ կը բացուին առջևը, հիանալի հոյակապ շէնքեր, զարմանալի արուեստներ և ակնապարար զմայլելի նկարներ. և այս առարկաներու բազմադիմի նորանոր փոփոխութիւնները տեսնելով՝ կը սքանչանայ, կը զմայլի և չէ կարող խօսիլ. կ'ապշի կը հիանայ և չէ կարող բացատրել:

Այո՛, ես լոկ խորհելով կը կրեմ այս սքանչացումը, բայց արդեամբ մտած ունի՞նք Աստուծոյ բանին բազմադիմի գեղեցկութեան մեջ, պատահած ունի՞նք նորա անճառ զմայլման. բաբէ՛, սիրով հոգւոյն զգուա՞ծ ենք Աստուծոյ որդիքը, գուրգուրացա՞ծ ենք երբէք գթալով անոնց աղետալի կացութեան վրայ, վշտագին բեկեալ սրտիւ նկատա՞ծ ենք արդեօք ազգին և նորա մատաղ սերունդին ապագայն. զանոնք կրթելու, դաստիարակելու և

անոնց ուսումն տալու համար ո՞ր մեկերնիս զիջած ենք վարժարանաց խոնարհ և անշուք աթոռի մը վրայ նստիլ և մանկանց միտքն ու սիրտը կազդուրել, հոգին պարարել և նորա կարողութիւնները զարգացնել և բեղմնաւորել:

Այն աթոռները, զոր այսօր եկեղեցւոյ պաշտօնեաներն ընտրած են, այնտեղ շքեղապէս կը բազմեր Յիսուս, երբ երկնային ճշմարտութիւնը և ընկերային պարտքերը կ'ուսուցանէր ժողովրդեան. և բա՛րբ ի՞նչ վսեմ է իր տեսքը, ո՞րչափ պատկառելի է իր ներկայութիւնը, այլ սակայն ո՞րչափ սիրուն զմայլելի և սրտագրաւ է իր կեանքն ու խօսքերը: Բայց ի՞նչ էր Յիսուսի աթոռը, հողակոշտ մի, և յենարանը ծառ մի, երբեմն ցուրտ ժայռ մը թէ նստարան և թէ յենարան կը լինէր, բայց միշտ խուռն բազմութենէ շրջապատուած էր, շարունակ իր վարդապետութիւնը լսող, սքանչացող և զԱստուած փառաւորող մեծ բազմութիւն ակնածանօք կ'ողջունէր, իսկ այդ փառաց կարծուած աթոռներուն վրայ բազմողները միշտ տխուր միայնութեան, կամ աղմուկներու և կամ շողոքորթներու մէջ կը գտնուին, որոնք զիրենք կը բարձրացնեն՝ չարաչար ձգելու համար, և ահա այս ամենը ամէն օր տեսնող և կրողները, որ չեն զգար և չեն ճանչնար իրենց թշուառութիւնը՝ միթէ

անգետ չե՞ն. ուրեմն նիւթը չէ փառաւորողը այլ հոգին...:

Տեսէ՛ք ահաւասիկ նոյն պարկեշտ աթոռին վրայ երկոտասան անշուք անպատրաստ և խեղճ ձկնորսներ բազմեցան, երբ զաշխարհ կը լուսաւորէին և ազգեր ու լեզուներ կ'աշակերտէին: Այնտեղ հանգչեցաւ իր բազմաչարչար վշտերէն Սուրբ Գրիգոր, երբ ամբողջ ժողովուրդ մի, ողջոյն ազգ մը իր ահաւոր թագաւորովն հանդերձ խաւարի վիհէն դէպի լոյս կը կորզէր. վերջապէս այնտեղ գտան միսիթարուբիւն Սահակ, Մեսրոպ, Ներսէս և այլ բազմաթիւ Յարք, որոնք անխոնջ կուսուցանէին, կը կրթէին և կը լուսաւորէին, և ասոր համար է որ այսօր թագաւորած են անոնք սիրով և երախտեօք մեր հոգւոյն, սրտի և մտաց վրայ: Արդ եթէ մենք անոնց յաջորդներն անուանուելու փառասիրութիւնն ունինք, ինչո՞ւ անոնց գործոց նախանձաւոր չլինինք, ինչո՞ւ անոնց շաւղաց հետևելու արիութիւնը չունենանք, այլ՝ ընդհակառակն խոտորնակ ճամբով փառք որսալու ելնենք. միթէ չե՞նք հաւատացած դեռ, որ մեր կեանքը, փառքը, պարծանքը, վեհութիւն, ճոխութիւնը, վերջապէս ամեն բան՝ սիրոյ, խոնարհութեան և մեր տիրոջ օրինաց պահպանութեան մէջ է, յորոց խոտորելուն հետևանքը արհամարհանք և անարգութիւն է. ինչպէս որ

դարերով յառաջ մարգարեն իսկ Աստուծոյ կողմէն ազդարարութիւն ըրած է. «Եւ ահա, կըսէ, զձեզ բոլոր ազգաց առջև անարգուած արհամարհուած և երեսէ ձգուած ըրի, ինչու որ իմ ճանապարհս չպահեցիք, այլ օրէնքը կատարելու մէջ աչառութիւն կ'ընէիք»:

Սուրբ գրոց վճիռները, բարոյական կանոնները և խրատներն անփոփոխ են, ամէն ժամանակի համար կարևոր են, ամէն ատեն նոյն են. մարդկան չարեաց համար նորա պարունակած սպառնալիքները, նորա միջոցաւ խոստացուած պատիժները միշտ կատարուած են և կը կատարուին: Կոյրը աչք չունենալուն համար արեգակը չծագած չլինիր, այլ միշտ կը ծագի և կոյրն ալ նորա ազդեցութիւնը կը կրէ. մենք ևս մտօք կոյր լինելնուս համար, Աստուծոյ խօսքին ազդեցութիւնը չենք կարող խափանել. քանզի այն յաւիտենական օրէնք է: Մենք միշտ մեր անմիտ գործոց դառն հետևանքը կը կրենք, զոր յայտնած է մեզ Աստուծոյ իմաստութիւնը, թէ. «Ձիս անարգողը պիտի անարգեմ» և զգուշացուցած է, որուն եթէ չհաւատանք, դարձեալ կը յանդիմանէ մեզ՝ ըսելով. «Վա՛յ լքելոց սրտիւք, որոնք ոչ հաւատան Աստուծոյ, և վասն այնորիկ ոչ պահպանին ի նմանէ. վա՛յ այնոցիկ՝ որոնք կորուսին զհամբերութիւն, և որոնք ի բաց թողին զճանա-

պարհս ուղիղս և դարձան ի ճանապարհս թիւրս. և զի՞նչ արասցեն՝ յորժամ նկատել սկսանիցի տեր»:

Իմաստութիւն պէտք է մեզ, քանզի առաջնորդներ ենք, հմտութիւն կը պահանջուի մեզմէ, օրէնք և գիտութիւն կը փնտրուի մեր բերնէն, քանզի վարդապետներ ենք և Աստուծոյ պատգամաւորներ: «Խելացիները պէտք է առաջնորդութիւն ստանան», - կըսէ Իմաստունը. - «Իմաստնոց բազմութիւնը աշխարհի փրկութիւն, և հանճարեղ թագաւորը՝ ժողովրդոց հաստատութիւնն է»:

Իմաստութիւն ու հմտութիւն պէտք է մեզ, վասն զի տնտես և Աստուծոյ բանին մատակարարներն ենք: Արդ, եթէ մենք մեր պաշտօնի պարտքերը չգիտնանք ու չսովորինք, եթէ մատակարարելու ժամանակը, կերպը, իւրաքանչիւրին ընդունակութեան և սննդեան համար պէտք եղած տեսակները չգիտնանք, չպատրաստենք ու չբաշխենք, յայտնի է, որ Աստուծոյ որդիքը իրենց հոգևոր սնունդէն զրկած կը լինին, հետևաբար անհաւատարիմ, անձեռնհաս և յանցաւոր կը համարուինք. ինչպէս որ ենք այժմ: Վասն զի զրկած ենք ժողովուրդը իրենց հոգևոր կերակուրէն, ինչու որ մատակարարութեան գործոյն անտեղեակ ենք: Մեզ նման մարդկան գործը չէ այն. խելքի, շնորհաց և առաքիլութեան տեր լինելու է Աստուծոյ տան տնտեսը: Նախնիք ալ այսպէս կը

հասկնան, ինչպես որ յառաքելոց անտի աւանդուած է իրենց. «Չի զայսպիսի խահագործել կերակուր և մատոռուակել ըմպելի, արանց է բարեաց և քաջ ուսումնութեամբ հոչակաւորաց, որոնք բաւական են ածել հասուցանել զանկատար ոգիս յայր կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի»: Այսպես կը խօսի Յովիան վարդապետ, Սարկաւազ մականունանեալ իմաստուն պաշտօնեայն, որով յայտնապես ըսել կուզէ, թէ չարերուն, մոլիներուն և անիմաստներուն գործը չէ այս մեծ մատակարարութեան պաշտօնը կատարել:

Իմաստութիւն կը պահանջուի մեզմէ, այո՛, իմաստութիւն ի բանս, իմաստութիւն ի խորհուրդս, ի գնացս և յամենայն շարժմունս. իմաստութիւն, նախ ուղղութիւն և ապա զայն ուղղելու: Անօգուտ են խօսքերու առատութիւնը, սնտոի են բազմաթիւ գիտելեաց հմտութիւնները, չեն ազդեր իշխանական սաստումը և այլ արտաքին հազարաւոր միջոցները՝ առանց կենդանի օրինակի. եթէ իմաստուն լինինք՝ խաչափառին առակը կարող է մեզ համար ազդու խրատ մը լինիլ.

- Խաչափառին խրատ կուտայ մայրը:
- Որդեա՛կ, ուղի՛ղ քալէ, կըսէ:
- Իսկ որդին կը պատասխանէ.
- Մա՛յր իմ, ճիշդ քեզ նման կը քալեմ:

Ըստ ուղիղ օրինաց ճշմարիտ բարոյականին, բոլոր մարդիկ պարտաւոր են բանիւ և գործով իրարու բարի օրինակ լինիլ. այս՝ առ ընկերս ունեցած պարտուց մը կարևոր մասն է, որուն ենթակայ է մարդ Էակը ըստ ամենայնի, և որուն զանցառութեան հետևանքը խիստ աղետալի է և որուն տեղ ուրիշ ոչինչ չէ կարող փոխարինել, քանզի ընկերը գայթակղեցնել՝ սոսկալի չարութիւն է. և ծնած լինելու կամ ապրելու արժանի չէ: Արդ, հասարակ մարդիկ եթէ իրարու խօսքով և գործքով չար օրինակ լինելով պարտազանց կը գտնուին և դատապարտութեան արժանի են, ուրեմն մեզ ի՞նչ պիտի լինի. ո՞ր պիտի փախչինք և ուր պիտի թաքչինք՝ մենք որ մարդ լինելէ զատ քահանայ, ուսուցիչ և առաջնորդ ալ ենք. ի՞նչ բան կարող է ազատել մեզ սոյն անհրաժեշտ պարտաւորութենէն և պատասխանատուութենէն: Մեր ո՞ր առանձնաշնորհութիւնը կարող է արդարացնել մեզ. եթէ մեր սուրբ կարգն ըսես, ես զայդ մտածելով կը սոսկամ, քանզի երկու կողմէն ահագին արգելքներ և սպառնալիք կը տեսնեմ, նախ իմ Տէրս կըսէ. «Որում շատ տուաւ շատ խնդրեցի, և որում բազում աւանդեցաւ առաւել ևս պահանջեցի», և թէ. «Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց և այնպէս ուսուցէ զմարդիկ, փոքր կո-

չեսցի յարթայութեան երկնից»։ Երկրորդ Յիսուսի ճշմարիտ աշակերտ ընտրեալ անօթը կըսէ. «Մի՛ անփոյթ առներ գշտորհացդ, որք ի քեզ են, որք տուան քեզ մարգարեութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան... զգոյշ լինիջիր անծին և վարդապետութեան՝ և ի դմին յամեսջիր, զայդ եթէ առնիցես և զանձն ապրեցուցես և զայնսսիկ՝ որք քեզն լսիցեն»։

Աղօթից և պաշտամանց յաճախութի՞ւնը պիտի ըսես, այդ ալ տեսակ մը գայթակղութեան առարկայ ըրած ենք. քանզի եթէ կատարենք՝ պարտ ու պատշաճ երկիւղածութիւն չենք ունենար Աստուծոյ փառաց, մեծութեան և սրբութեան արժանաւոր ոչ վարք և ոչ պատրաստութիւն կունենանք. Տուցամութեամբ և սնափառութեամբ կ'երևինք Աստուծոյ առջև, անոր համար ալ կարհամարիուինք և աղօթքնիս չլսուիր։

Շատերս ալ շատ անգամ կը հեղգանք և կը զլանանք. ուզած ատեննիս կը կատարենք և չուզած ատեննիս անփոյթ կը մնանք, սակայն պետք է գիտնանք որ աղօթքն ևս նուիրական պարտք մըն է, որ միւս պարտուց հետ անհրաժեշտ կը պահանջուի, և որոյ զանցառութիւնը պարտազանցութիւն է և անհնազանդութիւն աստուածային հրամանաց, և ապերախտութիւն՝ ընդդէմ աստուածային բարերա-

րութեանց և գայթակղութիւն հասարակութեան: Ուրեմն այդ ալ մեզ չարդարացներ, այլ ատով ևս դատաստանի և պատասխանատուութեան ենթակայ ենք. հապա ի՞նչ բանի վստահած ենք. ոչ մի առարկայ չունինք վստահութեան, բայց միայն մեր անգիտութեամբ ունեցած կամապաշտութիւնն ու յամառութիւնը, որուն ի՞նչ աստիճան յիմարութիւն լինելը ինքնին յայտնի է:

Ինչո՞ւ չենք կարդար և հնազանդիր Առաքելոյն սա կենսաւետ խրատին, որ ի դեմս Տիմոթեայ մեզ ամենեցուն կը խօսի. «Օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատով, սրբութեամբ. մինչև գամ ես միտ դիր ընթերցուածոց մխիթարութեան և վարդապետութեան»: Դարձեալ թէ՛ «Ձձեռս լքեալս և զծունկս կթոտս հաստատեցէք. և զշաւիղս ուղիղս արարէք ոտից ձերոց, զի մի՛, որ կաղնիցէ գլորիցի՝ այլ մանաւանդ բժշկեսցի. Չխաղաղութեան զիտ երթայք ընդ ամենեսին և սրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանէ զտեր»: Ու նաեւ՝ «Եւ այնպէս յանցուցեալ յեղբայրս, և զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ, ի Քրիստոս մեղանչէ»:

Երանի՛ քեզ, Ս. Պօղոս՛ս, որ այդպիսի սուրբ խորհուրդներով իմաստնացած ես, և ոչ մեր ժամանակի յիմարական ցնորքներով: Երանի՛ և քեզ,

Տիմոթեո՛ս, որ այդպիսի անմահական խորհուրդներով և յաւերժական սուրբ սիրով վառուած բորբոքած ուսուցիչ վարդապետ մը ունիս, որ կարող է քեզ և քեզ լսողներն փրկել և Աստուծոյ արքայութեան արժանաւոր ժառանգներ ընել: Իսկ մենք ըստ յանդիմանութեան Տեառն, թեպէտ չենք յաժիր ընդ ծով և ընդ ցամաք եկամուտ մի, աշակերտ մը որսալու, սակայն մեր շուրջը եղող և մեզ տեսնող ամենուն ալ չարեաց պատճառ կը լինինք, և զանոնք որդիս գեհենի կը շինենք կրկին ևս քան մեզ: Ո՛վ երջանիկ հոգիներ, եկէ՛ք, տեսէ՛ք, թէ մեր ու ձեր վարուց մեջ ինչ մեծ տարբերութիւն կայ, բացէ՛ք մեր այժմու սառնասիրտ կրօնաւորացս առջև ձեր աստուածսիրութեան և մարդասիրութեան վսեմ զգացմամբ բռնկած սրտերը, որպէսզի գուցէ անոնց սրտագրաւ ճառագայթից ազդեցութեամբ մերն ալ ջերմանայ:

Հովի՛ւք Հայոց, աչքերնիդ բացէ՛ք, մտքերնիդ և սրտերնիդ ալ պարզեցէ՛ք, տեսէ՛ք, թէ նախնիք իրենց սրբութեամբ, հաւատքով, արդարութեամբ և բարի վարքովը ի՞նչպէս շարունակ մեր անարժան կեանքը կը յանդիմանեն. ի՞նչ պէտք է հեռի երթալ, ահա այժմ իսկ ամէն օր կշտամբանքը կը տեղան մեր գլխուն, նոյն իսկ անարժաններէն անգամ յանդի-

մանուկներն կը կրենք. մեր տմարդութիւն դատաւոր կացուցած է զկրտսեր մանուկները:

Պաշտօնեա՛յք եկեղեցւոյ, մեր նախորդներն գրոց վարդապետութեան մտադրութիւն կ'ընեն և այնտեղ մխիթարութիւն կը գտնեն. իրենց իմաստութիւնը Սուրբ Գրոց ուսումը կը համարին. «Ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որք կարողք են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն ի ձեռն հաւատոց, որ ի Քրիստոս Յիսուս»: Իսկ մենք ոչ թէ միայն ի մանկութենէ չենք գիտեր, այլ և մեծութեան ատենն անգամ, հարկ եղած ատենն անգամ ոչ գիտենք և ոչ կ'ուսանինք. անոր համար է, որ չենք «Քարոզեր Աստուծոյ խօսքը. վրայ չենք հասնիր ժամու և տարածամու»: Անոր համար է, որ «չենք կարող սաստել, յանդիմանել, և ամենայն երկայնամիտ վարդապետութեամբ մխիթարել» և ասոր համար է որ ամէն կողմէն ամենայն ոք կ'արհամարիէ մեզ. այս պատճառաւ ա՛լ ողջամիտ քարոզութեան մտիկ ընող չկայ. հապա «Ամէն մէկը իրենց ցանկութեան, և իրենց ականջայ խտտողելուն համեմատ վարդապետներ որոշած դիզած են և անոնց յօժարութեամբ կը լսեն», յորոց օգուտ մը չշահելէն զատ՝ չարաչար կը վնասին:

«Աստուծոյ խօսքը ուսուցանելու մասին հաւատարիմ եղիր, որ ողջամիտ քարոզութեամբ կարող

լինիս մխիթարել, և ներհակողներն ալ յանդիմանել. ինչու որ շատեր կան միտք հրապուրող, խելք գողցող, զրախօս, անհնազանդներ, որոնք զօշաբաղութան համար տուններ կը կործանեն՝ պետք չեղած բաներ սորվեցնելով... խօսքով աստուածապաշտ կը ձևանան և գործքով կ'ուրանան, որոնք պիղծ և անհաւան են և բոլոր բարի գործերու մէջ անպիտան. զորս պետք է պապանծեցնել».- Ինչո՞վ. սուրբ և ողջամիտ գիտութեամբ, ուսմամբ և բանին վարդապետութեամբ, մանաւանդ գործով:

Լսե՛նք, պաշտօնակի՛ցք իմ, մեր երանելի Յօր Սուրբ Ներսէս Շնորհալույն. «Եւ բանք բերանոյն մի անմտաբար խեղկատակութեամբ կամ աշխարհօրէն զառականս կամ զանկաճութիւնս ի լեզուն յեղեղելով անարգել զոք, այլ բղխեսցէ սրտին զբան բարի... յօգուտ և ի շահս լինել լսողաց և մի՛ ի վնաս և ի տաղտկութիւն և պատճառս աղարտելոյ զառաբելականս պաշտօն» (Թուղթ ընդհանրական):

* * *

Աշխարհի մէջ թագաւորք իրենց աթոռակից պետք է ունենան իմաստութիւնը, որպէսզի վայելուչ կարգով և խաղաղութեամբ թագաւորեն:

- Ի՞նչ են թագաւորք:

- Ժողովրդեան վարուց, կենաց և ընչից հսկող քաղաքական պաշտօնեայներ. անոնց բարւոյն

համար խորհող և տքնող՝ ժողովրդէն փառաւորուած շքեղաշուք սպասաւորներ, որ պետք է իրենց պաշտօնը հաւատարմութեամբ և արդարութեամբ կատարեն, ապա թէ ոչ՝ թող սոսկան այն կեցցե՛ր կանչող խաժամուժէն, որ իշխանութիւն ունի նաև անկցի՛ գոչելու. կամ թող սոսկան յաւիտենական արդարութենէն, որ կարող է խրատել զանազան ներքին և արտաքին հարուածներով:

Մասամբ այսպէս ենք և մենք: Ժողովուրդն իր պատուոյն և իր փառաց համար մեզ կը փառաւորէ, կը բարձրացնէ, և մենք այն պատիւը մեզ սեպհականելով՝ ժողովուրդը կը մոռնանք, այն փառքն ու մեծութիւնը, այն յարգանքն ու բարձրութիւնը բուն մեր արժանիքն համարելով կը խրոխտանք և մեր պաշտօնները բարձի թողի կ'ընենք:

-Ի՞նչ ենք մենք:

-Ժողովրդեան բարւոյն հսկող, սրբութիւն, արդարութիւն և լոյս մատակարարող պաշտօնեաներ. նորա վարուց և բարուց ուղղութեան հսկող պահպան և կրօնական սպասաւորներ, մարդկան սրտերը Աստուծոյ բնակութեան արժանաւոր բնակարաններ պատրաստելու համար որոշուած ծառայներ: Իրաւ, ծառայութիւն է մեր պաշտօնը, այլ իր տեսակին նկատմամբ վեհ է քան զամենայն իշխանութիւն, սակայն պաշտօնեայի վեհութիւնը

խոնարհութեան և քաղցրութեան մէջ է, իր փառքն ու պատիւը՝ իր պաշտամանց անթերի կատարման մէջ է, իր պարծանքը՝ իր գործոց արդիւնքն է, և իր բարձրութիւնը Աստուծոյ օրինաց պահպանութեան մէջ է. վերջապէս մեր երկնաւոր Յօր անունը փառաւորել տալու արժանաւոր գործոց մէջ կը կայանայ մեր արժանիքը և փառքը, և ոչ թէ անգիտութեան շաղփաղփութեան և դատարկաշրջիկ սնտոխաբանութեանց մէջ:

Եթէ թագաւորին լաւ թագաւորելու համար իմաստութիւն պէտք է, առաւել ևս մեզ, քանզի նա մարմնոյ, իսկ մենք՝ հոգւոյ հետ առնչութիւն ունինք: Եթէ աշխարհի հազարապետները թշնամեաց յաղթելու և ընտիր գտնուելու համար իրենց գործոց վերաբերեալ ուսմանց գիտութիւն, հմտութիւն և կրթութիւն պէտք է ունենան. առաւել ևս մենք, քանզի մեր գինուորութիւնը և մեր պատերազմական պատրաստութիւնները մարմնոյ և արեան հետ չէ, այլ խաւարի իշխանին հետ:

Եթէ հովիւ մը պէտք է իր հօտը արածելու համար խոտաւետ տեղերը գիտնայ, զովաստուեր ուռնեաց տակ ականակիտ ջրոց եզերքը հանգչեցնէ, և անոնց բնութեան ու սննդեան յարմար պարարտացուցիչ խոտերը ճանչնայ, առաւել ևս բանաւոր հօտի հովիւներ, որ անոնց բանակա-

Նութիւնը ինամելու կարգաւորելու և կազդուրելու հոգն ունին, պարտաւոր են գիտնալ՝ ինչ որ իրենց ինամոցն յանձնուած ժողովրդեան օգուտը կը պահանջէ, որուն համար անշուշտ իմաստութիւն կը պահանջուի մեզմէ:

Մենք այո՛, պէտք է իմաստութեան հետևիմք, Յա՛րք, մանաւանդ դուք, ո՛վ աթոռոց ցանկացող և իշխանութեանց հետամուտ պաշտօնակիցներ իմ, իմաստութեան ցանկացե՛ք, որպէսզի աթոռներն իրենց բուն էութեամբն ու որպիսութեամբը տեսնէք ու ճանչնաք, որ եթէ դժբաղդաբար հոն բարձրանաք, այլոց օգտակար լինիք և կամ գոնէ դուք չսայրաքիք. «Տանկութիւն իմաստութեան տանի յարքայութիւն. արդ ո՛վ բռունք ժողովրդեան, եթէ ցանկայք աթոռոց և գաւազանաց իշխանութեան, պատուեցե՛ք զիմաստութիւն, զի յաւիտեան թագաւորիցէք. ո՛վ առաջնորդք ժողովրդեան, սիրեցէք զիմաստութիւն, քանզի բազմութիւն իմաստնոց փրկութիւն աշխարհի և թագաւոր հանճարեղ՝ հաստատութիւն ժողովրդոց»:

Արդ կարծեմ այս չափով կրցի հասկացնել որ եկեղեցւոյ պաշտօնէից համար անգետ լինելը ամօթ է, մեղք է և մեծ վնաս թէ՛ իրենց անձին և թէ՛ իրենց շրջակայիցը: Հերիք սեպենք ուրեմն այս չափը և քիչ

մալ խօսիւք եկեղեցւոյ պաշտօնէից անգործութեանը վրայ կարճ ի կարճոյ:

Գ.

ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Առհասարակ ամեն մարդու համար աշխատութիւնը սուրբ պարտաւորութիւն մըն է, և անհրաժեշտ կարևորութիւն: Եթէ բնութեան մէջ ամեն բան գործունեութեան և պիտանաւորութեան կը մղուին ըստ իւրաքանչիւր չափու և պայմանի, առաւել ևս մարդը պէտք է մղուի. իսկ ուր անգործութիւն կայ, հոն պիտանաւորութիւն չկայ. ուրեմն անգործ մարդը անպիտան է և ծանր բեռ մը մարդկային ընկերութեան:

Աշխատութիւն հարկ է մարդուն ոչ միայն ապրելու, այլ և զգաստ և անմեղ մնալու համար. ինչու որ միտքն ու զգայարանքներն անգործ չեն կրնար մնալ: Ամեն մարդ պատուաւոր վիճակ մը ընտրելով՝ նոյն վիճակին մէջ իր չափովը պէտք է աշխատի անխոնջ, անմեղ և արդար՝ միշտ դէպի կատարելութիւն դիմելու ճիգով: Այս անկեղծ ճիգը կը ստիպէ զմարդ շարունակ շարժման մէջ լինիլ. և միտքը իր մասնաւոր գործոյն վրայ յառած և զբաղեցուցած լինելով մեղանչելէ ազատ մնալ: Մանաւանդ հարկ է, որ մարդ ժամանակ չթողու մեղաց և չար խորհրդոց անձնա-

տուր լինելու, այս կերպով միայն կրնայ վտանգե ազատ պահել մարդ իր մարմինն ու հոգին:

Աշխատութիւնը, թողունք որ բնական պարտաւորութիւն է, այլ և աստուածային հրամանաւ ալ վճռուած և պատուիրուած լինելով, ոչ միայն ընդհանրացած, այլ և սրբագործուած է. պէտք է աշխատիլ և աշխատութեան պտուղը վայելել: Աշխատողն է միայն վարձուց արժանի, առանց աշխատանաց ուտելը գողութիւն է և զրկանք, չաշխատողին ապրիլն անգամ ոճիր է: Բնաւ մէկը չէ կարող այս պարտքէն ազատ լինիլ և անվնաս կամ անպատիժ մնալ, քանզի վայրկեան մը բաւական է փորձութեան համար, որ համեստ աշխատանք է դատարկ գտնէ զմարդ. այն ատեն իսկոյն վրայ կը յարձակի և կը վտանգէ զայն բնապէս ու բարոյապէս:

Անգործ մարդը ծանր բեռն է աշխարհի, վնասակար անդամ մարդկային ընկերութեան, թշնամի և յափշտակիչ՝ հասարակաց աշխատութեան, նման պիծակներու, որ անաշխատ կը յափշտակեն մեղուաց անխոնջ աշխատութեան քաղցր պտուղը, կամ նման վնասակար հեղեղներու, որ երկրագործին աշխատութեան նպաստելու տեղ կը քանդեն և աւերակ կը դարձնեն նորա այնքան ինամօք պատրաստած այգին, պարտեզը և կամ

սերմանած արտը: Չկայ վիճակ մը, ուր մարդ ստիպուած լինի դատարկութեամբ ապրիլ, և արդարութեան առջև անբասիր մնալ, բաց ի ծանր հիւանդութեանց և հաշմութեանց ատեն, ուր ոչ միայն չէ կարող աշխատիլ, այլ և օգնութեան կը կարօտի, որուն օգնել ամէն մարդու պարտքն է:

Արդ, քանի որ մարդկութեան համար այսպէս է, եկեղեցւոյ պաշտօնեաներն ալ իբրև մարդիկ՝ ենթակայ են անշուշտ այս պարտուց, և ազատ չեն երբէք նորա զանցառութեան առթիւ գալիք չարիքներէն: Ուրեմն եկեղեցականն ալ թէ՛ իբրև Աստուծոյ արարած, և թէ՛ իբրև մարդ՝ պէտք է աշխատի և իրեն յանձնուած պաշտօնը կատարելու համար գործէ: Պէտք է շարունակ գործէ, իր անձը ընտիր կացուցանելու և իր կեանքը արդարութեամբ վարած և վայելած լինելու համար ներուած չէ իրեն երբէք դատարկ կենալ. հանգիստն անգամ իր անմեղ զբաղումը պէտք է ունենայ: Իսկ իբրև Աստուծոյ եկեղեցւոյն պաշտօնեայ, ինչպէս ամէն լաւութեանց մէջ, նոյնպէս և աշխատութեան մէջ իր անձը, միտքն ու սիրտը սուրբ պահելու, արդարութեամբ ապրելու, հաւատացելոց օրինակ լինելու համար պէտք է գործէ և առաւել ևս գործէ, աշխատի անխոնջ և շատ անգամ անբուն: Չգիտնալու բան չէ այս, վասն զի թող որ Յիսուս Քրիստոս օրինօք պատուիրած և

օրինակով ալ ուսուցած է, այլ և բանականութեան լոյսը ըսել տուաւ երբեմն հեթանոս փիլիսոփայ բանաստեղծի մը թէ՛ «Յասարակաց վրայ հոգ ու ինամք տանելու պաշտօնն ունեցողին չի վայլեր որ գիշերն ի լոյս ննջէ»:

Հապա դու քեզ համար ի՞նչ պիտի ըսես ո՛վ եկեղեցւոյ պաշտօնեայ, որ ոչ թէ միայն գիշերը, այլ և ցերեկն ի բուն դատարկ անցնելէ զատ շատ անգամ քնով կը դանդաչիս, կամ դատարկաբանութեամբ և կամ խաղերով ու զբօսանքներով կը զբաղիս, որոնք չեն վայելեր քեզ, վասն զի քեզ յանձնուած է ժողովրդեան հոգւոյն փրկութեան ամենամեծ հոգը, քու մէկ փոքրիկ զանցառութիւնդ, անզգուշութիւնդ և անհոգութիւնդ կրնայ ժողովրդեան սրտին մէջ անբուժելի վէրքեր բանալ: Սորա ճշմարտութիւնը միթէ չէ՞ք տեսներ ժողովրդեան մէջ ամէն օր, չէ՞ք համոզուիր, որ ժողովրդեան գայթակղելոյն, ի հաւատս տկարանալուն և շատ անգամ մեծամեծ մեղքերու մէջ ինկնելուն պատճառը դուք էք, ուրկէ ոչ դուք և ոչ այլ ոք կարող է հանել:

Եկեղեցւոյ պաշտօնէին չի վայելեր պարապ մնալ իր հոգևոր պաշտաման մէջ յեղգութիւնը իր քրեական յանցանքն է: Անհնար է, որ մարդ հոգևոր պաշտաման մէջ զբաղիլ ուզէ, և «գործ չկայ» ըսէ, քանզի շարունակ գործելու առիթներ ունի, քանի որ

ժողովուրդն յաջորդական է, և մեն մի հոգւոյ փրկութիւնն անգամ մեծ խնամոց և հսկողութեան կը կարօտի: Իսկ եթէ լինի որ իրօք իր յատուկ պաշտօնն ու վիճակը հանապազ աշխատելու չափ զբաղումն չի մատակարարեր (որ անհնար է) պէտք է հոգ տանի և իրեն զբաղելու և հաւատացելոց օգտին համար գործ գտնէ և անգործ չկենայ:

Մեր պաշտօնն է Աստուծոյ Աւետարանն ու անոր փրկաւետ օրէնքները քարոզել հաւատացելոց և անհաւատից, ուսուցանել զնոսա, մխիթարել, քաջալերել, յանդիմանել, բժշկել զտկարացեալսն ի հաւատս և հաստատել. այս գործերու վրայ մտածող անկեղծ և հաւատարիմ պաշտօնէին գործ չի պակսիր: Նա շարունակ կը զբաղի սուրբ Գիրք ընթերցասիրելով, նախնեաց ողջամիտ վարդապետութեանց մէջ յածելով, որովք զաշխարհ աշակերտեցին. կը խոկայ ժողովրդեան վիճակին վրայ, անոնց ախտերը և վնասակար հակամիտութիւնները կը նշմարէ, միշտ ժամանակին կը հասնի ախտից վրայ և դեռ հօտին մէջ չճարակած՝ դեղն ու դարմանը կը հոգայ, կը խնամէ, կը կազդուրէ և կ'ուղղէ:

Նա իր հօտին մէջ կը ծաւալէ մտաց լոյս և անարատ վարուց կենսաբոյր անուշահոտութիւն, և այս ամենը կը յաջողի հեզութեամբ, խոնարհու-

թեամբ, քաղցրութեամբ, սիրով և երբեմն աստուածային օրինաց նախանձախնդրութեամբը վառուած բորբոքած, ու ոչ թէ կատաղի կրից բորբոքմամբ, ամբարտաւանութեամբ և անհատական վրէժխնդրութեան վատ ոգով:

Ասոնք այնպիսի գործեր են, որով շարունակ գբաղած կրնան լինիլ եկեղեցւոյ պաշտօնեաներ, հովիւներ և այլ,- Տէր, Յայր սուրբ, Սրբազան, Գերապատիւ, Ամենապատիւ, Վեհափառ,- և այլն խոշոր անուններով փոքրիկ սպասաւորներն ու անպիտան ծառայները:

Ամենէն տկարամիտն անգամ երբեմն կը դատէ ու կը դատապարտէ, շատ տեսիլներ, գործեր և փառքեր կարող են ժողովուրդը զարմացնել, բայց չեն կարող նորա ուշքն ու սիրտը միանգամայն գրաւել: Պարտաւոր ենք յիշել, թէ մենք այս պաշտօնին մեջ չմտած ի՞նչ կը լսէինք և ինչ կը խօսէինք անգործ և դատարկասուն պաշտօնէից վրայ, և կամ ընդհանրապէս ի՞նչ կը պահանջէինք եկեղեցւոյ պաշտօնեայներէն. անշուշտ նոյնը և ա՛լ աւելին պիտի խօսին մեր վրայ և պիտի պահանջեն մեզմէ, քանի որ մենք նախապէս արդէն եղածներուն չէինք հաւնիր և կանոններ կը տայինք անոնց:

Ժողովուրդն մեզ անգործ կուռքեր շինելու համար չէ որ կը որոշէ, կ'ընտրէ և երկրաքարշ

վիճակէ մը կը հանէ կը բարձրացնէ և իր վրայ հսկող կը դնէ. այլ հարկաւ ակնկալութիւն մը ունի, տկարութիւն մի, կարօտութիւն մը ունի, և անշուշտ կը սպասէ, որ մեր գործունէութեամբը լեցնէ իր կարօտութիւն ու ակնկալութիւնը, և զօրացնէ իր տկարութիւնը, գոհ և ուրախ լինի իր վիճակին մէջ, խաղաղ և մխիթարեալ լինի ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. և ահա այն ատեն կակնածի, այո՛, կը փառաւորէ, և կը սքանչանայ: Սակայն այս ակնածութիւնն ու յարգանքը ներսէն, սրտէն, հոգւոյն մէջէն կուգայ և հաճոյք ու բերկրանք կառթէ, այս ակնածութիւնը ի Հայրական քաղցր սիրոյ և յերախտեաց ազդած կը լինի որ ամենաքաղցրն ու ամենասիրելին է, և չէ թէ ի բռնական խրոխտմանէ և անխիղճ հարստահարութենէ, զրկանքէ և կեղեքումէ. որուն սկիզբը երկիւղ, տագնապ և սրտի վրդովումն ու վախճանը վրէժխնդրութիւն և հատուցումն է...:

Այո՛, Հայրք, գործելու կոչուած ենք, ոչ թէ պարապութեան. գործեր յանձնած է մեզ Աստուած, և ժողովուրդը. ժրութիւն և արթնութիւն կը պահանջէ մեզմէ Բարձրեալը, օգնութիւն կ'աղաղակէ ժողովուրդը. ինչո՞ւ տակաւին անշարժ և խուլ կը մնանք այս անդիմադրելի պահանջմանց և հզօր ձայնից առջև, որոնք կարող են իրենց հատուցումը

փութացնել. մին իր փառաց անարգութեան և միւսը իր յուսոյն ի դերն ելնելուն համար:

Ուրիշ մը իրեն անծին անվայել շքեղութեամբ զարդարուած գեղանկար և ոսկեզօծ կառքի մը մէջ պինդ կռթնելով հարուստի մը թւին՝ Նստած է ահաւոր կերպով. սրարշաւ Նժոյգները արագութեամբ կը քաշեն կառքը. աղքատը կամ յառաջուց կռահելով, կամ հեռիէն Նշմարելով, որ իր բարեխնամ Յայրը, Աստուծոյ կողմանէ կարգուած իրեն տնտեսը այն կողմէն կ'անցնի՝ ճանապարհին վրայ կանգնած, վիզը ծռած, ձեռները բացած կողկողագին կ'աղերսէ. բայց Յա՛յր, դու գիտե՛ս ի՞նչ կ'ընես, մի՛ կարծեր որ թաքուն կը մնայ, գիտե՛ս քեզ աղերսող զակիդ դէմ ինչպէս կը վարուիս. – Ո՛հ, երեսդ կը դարձնես, որ չտեսնես քովինիդ հետ խօսքի կը բռնուիս, որ այդ քու սրտիդ ատելի տեսարանն անցնի, և այն խեղճը խաբուի և կարծէ թէ չ'տեսար և քու վրայ միշտ Նպաստաւոր յուսով ապրի, առանց օր մը իր անկնկալութիւնը պսակուած տեսնելու. բայց գիտցիր որ քու այդ փառքիդ մէջ յայնժամ խիստ ցած ու Նուաստ երևոյթ մը ունիս, պժգալի է այդ ժամանակի քու տեսքդ, Նողկալի և արհամարհելի ես ամենուն. ամօ՛ր թէ Յա՛յր, այդ չէ քու գործդ...:

Տակաւին ո՞ր կը գտնուիք, Յա՛րք.- բարձր ու շքեղազարդ ապարաններու մէջ, ուր աղքատը չէ

կարող մտնել. քանզի դրան սեմոց վրայ կոխելն անգամ պղծութիւն կը համարուի և թշուառը գանակոծ կ'արտաքսուի անկէ. հապա դո՛ւ, ո՛վ պաշտօնեայդ եկեղեցւոյ, դու անօգնական թշուառին պաշտպանը, դու որո՞ւ համար զգեցած ես այդ որոշեալ ձևդ, ինչո՞ւ մտեր փակուեր ես այդտեղ, դու գործ չունի՞ս.- Այո՛, կ'ըսէ, գործ ունիմ:

-Եւ ի՞նչ է գործդ:

-Հիմա նարտ կը խաղամ, յաղթելու վրայ եմ, միտքս մի՛ շփոթէք:

-Բայց Հայր՝ այդ քու գործդ չէ...

-Քիչ մը ետքը աղային հետ զբօսնելու ալ պիտի երթանք:

-Բայց պաշտօնդ զքեզ կը կոչէ:

-Է՛յ, հիմա խօսելու ժամանակ չունիմ, ըսի՛նք եա՛:

Ափսո՛ս, դեռ այդ տեղուա՞նքը կը դեգերիք, անձնուրա՛ծ Հոմիւներ, դեռ ձեր կոչման վերադառնալ չէ՞ք զիջանիր, տակաւին այսչափ ազդեցութեան փողերը ձեզ լսելի չեղա՞ն. նախատուեցաք, դանակոծ եղաք, աքսորեցաք և շարունակ հրապարակաւ կը խայտառակուիք և դեռ չէ՞ք զգար. չէ՞ք տեսներ որ Տիրոջ ահաւոր սուրը պատենէն ելած է, և ձեր ու ձեզմով ալ ժողովրդեան գլխուն վրայ թերաքամ կը կենայ:

Ուրեմն Յարթ իմ, գործել պետք է, որ անբասիր մնանք. գործել պետք է, որ Սրբազան Առաքելոյն և Ժրաջան մշակին պէս ըսելու կարող լինինք. «Գործ իմ դուք էք ի Քրիստոս...»: Գործել պետք է որպէսզի Աստուծոյ ժողովուրդը իր սահմանուած սրբութեան մեծութեան և փառաց հասնի: Ո՛հ, ո՞րչափ սրտառուչ է Առաքելոյն սա խօսքը, «Վերստին երկնեցից մինչև նկարեցի ի ձեզ Քրիստոս»: Արդարև գործել պետք է, միանգամայն Աստուծոյ ժողովուրդն յԱստուած ծնանելու համար երկունք կրել պետք է:

Միթէ ծա՞նր բան է, որ մեր պարտուց պահանջածը գործենք, ո՛չ, այդ բան մը չէ, մենք պարտաւոր ենք գործել, եթէ հարկն ստիպէ մինչև անգամ ապրելու համար ձեռագործ մը, արհեստ մը ունենալ և գործել հաց ճարելու, ժողովրդեան վրայ չծանրանալու և աշխատութեան մեջ ալ անձամբ օրինակ լինելու համար: Ուշադրութիւն դարձնենք անգամ մը Առաքելոյն հետևեալ խօսքերուն և տեսնենք թէ ի՞նչ սուրբ վստահութեամբ և խղճի բաղքը հանդարտութեամբ մը կը խօսի. «Որպէս դայեակ մը որ սնուցանիցէ մանկունս, նոյնպէս և մենք գթայաք ի ձեզ. հաճոյ թուէր մեզ տալ ձեզ, ոչ միայն զաւետարանն Աստուծոյ, այլ և զանձինս մեր. բանզի սիրելիք մեր եղէք: Յիշէք Ե՛ղբարք զվաստակն մեր և զջան. զի զցայգ և զցերեկ գործեաք

վասն չծանրանալոյ ումեք ի ձեւջ և քարոզեաք ձեզ զաւետարանն Աստուծոյ. դուք ինքնին վկայք էք և Աստուած, որպէ՛ս սրբութեամբ և արդարութեամբ և անբծութեամբ ձեզ հաւատացելոցդ եղեաք»: Ուրիշ տեղ մը նորէն կ'ըսէ. «Դուք ինքնին գիտէք զի զպէտս իմ և որոց ընդ իսն էին պաշտեցին ձեռքս այս»:

Կը տեսնե՞ք, Առաքեալը իր անձն անգամ չի ինկայեր, իսկ մենք ժողովրդեան հոգւոյն կերակուրն ալ կը ինկայեմք. ո՞րպիսի պարզութիւն, ի՞նչ անկեղծութիւն և ճակատաբաց համարձակութիւն է Առաքելոյնը որ գիշեր ու ցերեկ աշխատեցայ, կ'ըսէ, ձեզմէ մէկուն վրայ չծանրանալու համար: Դարուս մէջ կը գտնուի՞ արդեօք մէկը որ ժողովրդեան վրայ ծանրացած չլինի և որ զժողովուրդը սիրած ու ժողովրդէն սիրուած լինի. այս չըլլալէ զատ ցաւալի է, որ կղեր բառն առակ նշաւակի եղաւ հրապարակի մէջ, յամօթ անարգելոց՝ և յանարգութիւն անարգողաց. ի նախատիւս ներկայիս, ի սարսափ և ի զգուանս ապագային:

Մեզմէ ո՞ր մէկը պիտի կարողանայ համարձակ և ճշմարտութեամբ ըսել, թէ գիշեր ցերեկ աշխատեցայ և մանուկ սնուցանող դայեկի մը պէս ձեր վրայ գութ և սէր ունեցայ և կամ որո՞ւ համար պիտի կրնանք ըսել, թէ՝ «Քրիստոսով իմ գործս դուք էք»:

Ի՞նչ անոյշ վստահութիւն, ի՞նչ երջանիկ անկկալութիւն է որ սրբազան Առաքելոյն հոգին կը տածէ և ինչ անկեղծ ու խղճի կատարեալ հանդարտութիւն է, որով կը համարձակի ըսել. «Չընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի, այսուհետև կայ մնայ ինձ արդարութեան պսակն»: Թող ամէն պաշտօնեայ ինքնիրեն գայ, խորհի, իր կեանքը անաչառապէս քննէ, պիտի կարողանա՞յ արդեօք անկեղծ վստահութեամբ ըսել հաւատարիմ աշխատող պաշտօնէի մը բերնին արժանաւոր այս խօսքը: Սակայն եթէ համարձակի մէկն ըսել, չէ՞ որ իր անարժան գործոց ցանկը ի յանդիմանուիւն իր կեղծ ու պատիր խաբէութեան իրեն պիտի կարդացուի. իր կոչմանն արժանաւոր ընթացքի մէջ չգտնուիլը երեսը պիտի զարնուի. իր ծուլութիւնը և անհոգութիւնը իրեն դատաւոր պիտի լինի, և իրեն յանձնուած հոգաբարձութեան կամ տեղը մնալը կամ անկարգ խառնաշփոթութեան մէջ լինելը իր ստութիւնը պիտի խայտառակէ, անոր համար չպիտի կրնայ վստահիլ գէթ ըսելու թէ՛ «Ծառայք անպիտանք եւք, զոր ինչ պարտն էր առնել՝ արարաք»: Ինչո՞ւ,- վասն զի պարտք եղած բանէն բան մը ըրած չէ, այլ ամէն պէտք եղածները երեսի վրայ թողած է անհոգութեամբ, որուն համար այսպէս կը խօսի Յովհան վարդապետ. «Քանզի

արտաքոյ իրաւանց Է և անտեղի բոլորովին, ոչ ըստ արժանի իշխանութեանն գնալ կոչման, կամ պղերգաբերիլ, և թերահոգ առ դնել յոր հաւատացան հոգաբարձութիւն նմա»:

Եւ արդարև անտեղի և անիրաւութիւն Է, չգործել և ապրիլ, իրեն յանձնուած պաշտօնը հաւատարմութեամբ չի կատարել, և տակաւին բաղբաղանօք մարդկան մէջ երևելու համարձակիլ. չգործել, արդիւնք չտալ և իբրև յափշտակիչ այլոց վաստակն ուտել, ի՞նչ կրնայ անուանիլ այսպիսի գործ և գործող մը. թերևս խիստ դատած չենք լինիր երբ գործը ոճիր և գործողն եղեռնագործ անուանենք, քանզի այնպիսիք ուրիշ անուն չունին:

Այս Է Քրիստոսի ճշմարիտ աշակերտին մէկ յատկութիւնը, առնել և ուսուցանել. այստեղն Է իր մեծութիւնը. «Եւ որ արասցէ և ուսուցէ, նա մեծ կոչեսցի»: Որով ի պահանջել հարկին կարող կը լինի անոնց ստահակութիւնը սանձել. և ահա ասկեց յայտնի Է որ ինչու մեր ժամանակի ժողովրդականք անուղղայ կը մնան և ինչ Է մեր անհամարձակութեան պատճառը, որ չենք կարող անոնց գործերը երեսնին զարնել, յանդիմանել և ուղղել. քանզի կը տեսնենք, որ Նոյն յանցանօք մեղսակից ենք այնմ, զոր կը յանդիմանենք, և երբ փոխադարձ անկէ ալ կը յանդիմանուինք իսկոյն կը խռովինք,

սրտերնիս կը վշտանայ և իբր թէ եթէ նա չի խօսեր կամ թաքուն մնար մեր յանցանքը, մենք յանցաւոր չպիտի համարուէինք. այս յիմարական ցնորքով անոնց մեզ յանդիմանելը անարգանք մը և իբր եղեռնական մատնութիւն մը համարելով անզուսպ և անհանդուրժելի բարկութեան կրիւք վարակեալ՝ կատաղութեամբ կը խօսինք և ալ անձնական վրէժխնդրութեան կը դարձնենք գործը, որով նորա հոգին կը վիրաւորենք, քան թէ կը բժշկենք. չար օրինակ կը լինինք քան թէ յուղղութիւն կ'ածենք: Ուստի գիտնալով որ մեր ապարդիւն խօսքը ազդեցութիւն պիտի չընէ, սկսած ենք շատերնիս կիրքերն ու կամքերը պաշտելու համար ժողովրդեանն ալ շոյել, ըրածը պակասութիւն չի համարիլ. սուտ ու փուտ պատճառաբանութեամբ արդարացնել, որ նա ալ մերիկին աչք գոցէ. շատ անգամ ոմանք կրօնաւորք իրենց ստութեան, չարութեան և խաբէութեան գործիք կ'ընեն ժողովրդական մի, որպէսզի իրենք արդարանան:

Յա՛րք, պատուական Յա՛րք, մեզ յանձնուած գործոյն պարապինք հաւատարմութեամբ, գործենք շարունակ, տքնինք անդադար, որպէսզի թուլութեամբ թէ մեր գործն ու պաշտօնը աղարտած ու արդիւնքէ և վարձքէ զրկուած չըլլանք և թէ չարին ծուղակը չբռնուինք. քանզի անգործութիւնը աղբիւր

Է մեղաց և մոլութեան, թելադիր Է չարութեան և անկարգութեան, վերջապէս ծնող Է հիւանդութեանց և մահու:

Անգործ պաշտօնեայն արդարութեամբ ապրելու յոյս չունի, Աստուծոյ վրայ հաւատք ալ չունի, քանզի նորա օրինաց հնազանդած չունի, իր յոյսը բոլոր իր անձին վրայ դրած է, այս պատճառաւ ազահ ալ կը լինի:

Դ. ԱԳԱՅՈՒԹԻՒՆ

Ագահութիւնը, որ առանց օգտակար գործածութեան ինչք ստանալու անյագ բաղձանք ըսել է, խիստ տգեղ շարժառիթներ եւ անհամար չար հետեւութիւններ ունի: Ագահութեան կը շարժի մարդ կամ մահկանացու լինելը չիշելով, կամ նախախնամութեան վրայ հաւատք չունենալով, կամ ծոյլ, անգործ եւ անպիտան լինելով, եւ կամ իր ճշմարիտ սիրոյ առարկայէն՝ Աստուծմէ, հեռացած՝ նիւթին և ապականութեան յարելով:

Իսկ ագահութեան հետեւանքն ո՞վ կարէ թուել: Ագահութիւնն զմարդ խարդախ, նենգամիտ եւ խաբէբայ կ'առնէ. ագահ եղողը ստութիւնը ճշմարտութիւն կը համարի, գողութիւնը իր իրաւունքը կը սեպէ, զրկանքն արդարութեան տեղ կը դնէ, երբեմն քծնող ու շողոքորթ է, ուրիշ անգամ՝ յանդուգն, խրոխտ եւ կատաղի գործ մը ընելու կամ նոյն իսկ իր պարտքը կատարելու համար մեծամեծ պահանջք եւ չափէ դուրս փոխարինութիւն կուզէ, բազմիցս իր պահանջած վարձքն աւելօրդովն հանդերձ ընդունելով՝ պարտազանց կը գտնուի եւ կը պատճառէ, թէ

աշխատովիան յարմի ճանչցող չկայ, սակայն լի ու լի փոխարինութիւնը գրպանը զետեղելէ վերջը կամ կը մոռանայ, կամ քիչ կը համարի, վերջապէս՝ իրաւունք, պարտք, արդարութիւն, ճշմարտութիւն ազահին համար նշանակութիւն չունին. լոկ խաբելու համար, իբր պատրուակ, տոյն բառերը բերնով միայն կը գործածէ:

Ազահը յուզմունքն ու խռովութիւն կը սիրէ, շատ անգամ ինքն իսկ կը սերմանէ զայնս, ուրկէ կը յուսայ իր ազահութեան ճարակ տուալ պտուղ քաղել:

Այսչափ եւ դեռ եւս ասկէ շատ անելի չարութեանց ծնող է ազահութիւնը, ինչպէս եւ Առաքեալն իսկ, մայր ամենայն չարութեանց եւ կռապաշտութիւն կ'անուանէ զայն: Եւ, յիրաւի, պիղծ կռապաշտութենէ զատ ի՞նչ կրնայ անուանիլ ազահութիւնը, քանի որ ի սեր անձնական շահու վառեալ՝ կը զոհէ ամէն բան, ոտնակոխ կ'ընէ բոլոր օրէնք, սրբութիւն, քաղցրութիւն, խաղաղութիւն եւ արդարութիւն եւ իր մէկ վատ հաճոյիցը կը զոհէ ամէն բան, կը զոհէ ընկերին իրաւունքը եւ նոյն իսկ՝ ընկերը:

Արդ, ո՛վ Հարք, կուզեմ հարցնել ձեզ խոնարհաբար, թէ ի՞նչ բանի համար անելորդներու կը ցանկայք եւ ի՞նչք կը դիզէք, միթէ թշուառին օգնելու՞ համար,- սուտ էք. զայդ չէք ըներ, որ ձեր բուն պարտքն է, հապա ի՞նչ է պատճառը, որ չէք յագենար

ժողովելով եւ չէք բաւականանար ամբարելով ձեր ապագային համար: Այո՛, բայց չէ՞ք գիտեր, որ ձեր գանձարանը ժողովուրդն է, ինչու՞ այնպես չէք վարուիր, որ ձեր բոլոր կենաց ամէն վիճակին մէջ ալ ժողովուրդը գուրգուրայ ձեր վրայ: Աշխարհի փոփոխական դէպքերը ձեզ խրատ ընելու չա՞փ ալ իմաստասիրութիւն չունիք, չէ՞ք տեսներ, որ այդ նիւթական ինչքերն միշտ տրամադրուած նպատակներուն չեն ծառայեր. կա՛մ կըսպառին, կա՛մ կը կորչին, կը գողցուին, կա՛մ արկեղներու մէջ անօգուտ կը բանտարկուին եւ, հուսկ, ուրեմն ձեզմէ կը բաժնուին:

Դուք՝ ննջեցելոց դագաղին առաջեւ կեցած, նուաստ ակնկալութեամբ ննջեցեալին անարժան գովեստներ հիւսած ատեննիդ ալ չէ՞ք յիշեր, որ օր մը դուք եւս նորա պէս պիտի անշնչանայք, եւ ձեր հոգին արդար դատաւորի մը առջեւ պատասխանատուութեան պիտի ներկայանայ, եւ այն ատեն ձեր դիզածն ու պատրաստածը ի՞նչ պիտի լինի եւ ի՞նչ օգուտ պիտի ընէ ձեզ: Մեր Տէր Յիսուս Քրիստոսի պատուէրը ձեր սրտին չէ՞ ազդած. «Ծախէ քու ունեցածդ, աղքատաց տուր եւ իմ ետևես եկուր, եթէ երկու ունիս, մին աղքատին տուր»: Միթէ ասոնք քեզ համար չե՞ն, որ եկամուտներ ու կազմուածներ կը պատրաստես, ինչու՞ կը վախնաս, մի գուցէ կը

կասկածիս, որ անօթի կամ մերկ կը մնաս, խեղճ հոգի: Ուրեմն քու ագահութիւնդ, Նախախնամութեան վրայ հաւատք չունենալէդ յառաջ կու գայ:

Յեթանոս փիլիսոփայն, տիեզերաց Նախախնամական օրէնքը քննելով, Աստուածութիւնը կը տեսնէ եւ չի վարաներ Նոյնիսկ զԱստուած Նախախնամութիւն կոչելու. «Դուք՝ մարդ Աստուծոյ, քրիստոնեայ, աստուածային գթութեան ու ինամոց մէջ ողորդուած անոր չհաւատալիդ, զայն չճանչնալիդ անհասկանալի բան է: Նա մանաւանդ չէ՞ որ դուք Նոյն Նախախնամութեան պաշտօնեայներն էք, չէ՞ որ Նորա գթութիւնը եւ ողորմութիւնը քարոզելու փառքն ու պատիւն ունիք, չհաւատացած բաներնիդ ինչպէ՞ս կը քարոզեր, եւ եթէ քարոզեր ալ ի՞նչ արդիւնք պիտի ունենաք: Բայց միթէ դուք ձեր բոլոր կենաց մէջ չէ՞ք պատահած այնպիսի ստիպողական վայրկեանի մը, ուր պարզապէս Նշմարած լինիք Նախախնամութեան մատը, անկարելի է, որ պատահած չլինիք, բայց այնպիսի պարագայներու մէջ ձեզ եղած ինամքն ու օգնութիւնը գուցէ ձեր աչալրջութեան եւ հանճարին արդիւնքն համարելով ուրացած էք, Նորա ինամքը եւ հաւատքնիդ պակասած է Նորա վրայ: Բայց կ'աղաչեմ՝ գոնէ լսեցէք ձեր Վարդապետին, եթէ Նորա ճշմարիտ աշակերտներն էք եւ եթէ կը հաւատայք անոր:

Յորժամ առաքեցի զձեզ քարոզել, միթե կարօտացայք իմիք, ասեն ցնա՝ ո՛չ: Արդ ընդէ՞ր խորհիք ի սիրտս ձեր, թէ հաց ոչ բարձաք: Մի հոգայք վասն վաղուեան. վաղիւն վասն իր հոգասցի, զի շատ է աւուրն չար իր:

Այսպէս, ահա՛, քու վարդապետդ, ո՛վ պաշտօնեայ, քեզ չափաւորութիւն, բաւականասիրութիւն եւ աւելորդաց արհամարհութիւն սորվեցուց, դու այդ հեթանոսական մոլութիւնը ու՞րկէ սորվեցար: Յիսուս զքեզ գործելու կը կանչէ եւ անով քու կարեւոր պիտոյքդ ամէն տեղ պատրաստ կը ցուցնէ. հաւատարիմ ու գործունեայ մշակին համար ոչ վարձք եւ ոչ պիտոյք կը պակսի, ուրեմն ագահ պաշտօնեայն ծուլութեան համար ագահութիւն կ'ընէ:

Այո՛, ագահը կը տքնի ինչք դիզել, որպէսզի անգործ, ծոյլ եւ դատարկ մնայ. ունայնութիւնը պաշտէ եւ մարմինը պարարէ, սակայն իր բնութեան օրէնքով ինքը կը պատժուի եւ չարաչար տանջանօք իր նպատակին չի հասնիր, քանզի նախ իր ագահութիւնն յագեցնելու համար ստիպուած է չարաչար աշխատիլ ու տանջուիլ՝ թեպէտ եւ ապօրինի, մտօք եւ մարմնով յուզուիլ եւ վաստակիլ՝ թէ եւ մնտի: Երկրորդ՝ քանի ինչքն աւելնայ նոյնպէս մտաց հոգը: Մարմնոյ վիշտը եւ հոգւոյ տագնապն ու վրդով-

մուկքը այնչափ կ'աւելնայ. միշտ իր պաշտած կուռքը մեծցնելու եւ իր տանջանքը բազմապատկելու բաղձանքը տիրելով վրան՝ մշտաչարչար ծառայ մը կը լինի, վատ եւ կաշկանդեալ գիրի մը կը դառնայ անոր. սրտով մտօք եւ կամօք կը յարի այն բանին, կը սիրէ եւ կը պաշտէ զայն, որ իւր թշնամին ու դահիճն է: Եւ, ահա, այն ատեն ամէն բան կը մոռնայ՝ պարտք, պաշտօն, ժողովուրդ, կրօնք, օրէնք, վերջապէս՝ Աստուած, որով եւ ամենայն նուիրական ու սուրբ բաներ եւ իր մտաց առջեւ բոլորն ալ ունայնութիւն կը դառնան, իր սիրած ու պաշտած արծաթը միայն հաստատուն էութիւն կը համարի, անկէ դուրս ամէն բան նա նախապաշարումն է, բայց աս հարկի էր. երբեմն խաբելու համար ինքն ալ շատ բանի հաւատալ եւ ընդունիլ կը կեղծէ, այս կեղծիքը երբեմն ասոր-անոր իրեն գաղափարակից կարծածներուն պարծանօք կը յայտնէ խօսեալ պէս իմ, այնպիսի բաները չեմ ընտունիիր եւ չեմ հաւատար, կ'ըսէ՝ այսպիսիներէն մէկը գիտեմ, որ անգամ մը բարեբաղդաբար իրօք գիտնական եւ ճշմարիտ աստուածապաշտի մը կը հանդիպի, եւ, կարծելով, որ նա ալ իր դիմակը կը մերկանայ, կը յայտնէ անոր իր ոգին եւ կը բանայ իր սեւ սիրտը, բայց իր անկկալութենէն դուրս արժանաւորս յանդիմանու-

թիւն կը կրէ եւ խախթ ու խայտառակ կը լինի, բայց ամաչալը ո՞վ է:

-Քեզ համար ազահ կ'ըսեն, Յա՛յր, չե՞ս պատկառիր այս անունէն. դու ճշմարտութեան աշակերտ, դու մշտագոյ, անփոփոխ: Հին պաշտօնեայ, ամօթ չե՞ս համարիր փոխել զփառս միայն Աստուծոյ՝ քու չնչին բաղձանացդ դիւբ եղծանելի առարկային հետ, եւ նուիրել աստուածավայել սերը, պատիւը եւ տքնութիւնը այնպիսի իրաց, որոնք պատիր են եւ ապականացու: Դու ազահ ես, ուրեմն անիրաւ ու խաբէբայ ես, հետեւաբար անարժան ճշմարտութեան պաշտօնեայ լինելու, պետք է կամ դու ինքնին կամաւ հրաժարիս, կամ զքեզ արժանացնես, եւ կամ արդարութիւնը զքեզ պիտի խայտառակէ եւ հալածէ:

-Բայց ո՞վ ըսաւ, թէ ես ազահ եմ:

-Լրագիրներն՝ երբեմն, իսկ ժողովուրդն ամէն օր կաղաղակեն, կը գոչեն, կը բողոքեն, չե՞ս լսեր, անարդարութեան ցեխն ալ չես տեսներ, որոյ մեջ անձնովին թաղուած ես, բայց զարմանք չէ, քանզի այդպիսի ցանկութիւններն ու սերը մարդս կոյր եւ խուկ կ'ընեն:

-Անոնք սուտ են եւ տարապարտ տեղը զիս կանարգեն, ես գթած, մարդասեր ու բարեսիրտ մեկն եմ, իմ դուռս ու ձեռքս բաց է որբոյ եւ այրեաց,

պանդուխտներն ինձմով մխիթարուած են, ոչ երբէք առ իս դիմողներէն մին ունայնաձեռն հանած եմ, թշուառը միշտ գորովագութ հայր մը գտած է յիս, դուն ալ կը գրպարտես՝ այդպիսի անարդար յանդիմանութիւններ ընելովդ. ագահը դիզուած ինչք կունենայ, ու՞ր է իմ աւելորդ ինչքս:

-Մեծախօս Յա՛յր, ինքնագովութիւնդ ապացոյց է նախ, որ սուտը դուն ես եւ արժանի տակաւին բիւր անարդարաց, երկրորդ՝ այդ բերնուց սովրած պարծանաց խօսքերդ լոկ իրարու ետեւէ շարուած, աննշան բառեր են քեզ համար եւ լոկ խաբելու եւ թմրեցնելու միջոց, երրորդ՝ ես չեմ գրպարտեր Յա՛յր, այլ խրատ կուտամ, որ զգոյշ կենաս, հեռանաս մոլութիւններէ, բայց դու այնչափ ցնորած ու բանականութիւնդ կորուսած ես, որ խրատն ու յանդիմանութիւնը գրպարտութիւն կը սեպես, եւ փոխանակ գործով ամէն ըսուածները եւ իրոք արդարանալու, անպատկառ համարձակութեամբ անձիդ ներբողեաններ կը հիւսես կամ հիւսել կուտաս, չորրորդ՝ եւ, իբր անհերքելի ապացոյց, ինչք չունենալդ յառաջ կը բերես: Լաւ, կը խոստովանիմ, որ այդ չափ անյագաբար ժողովելդ յետոյ պետք էիր դիզուած ունենալ, ինչպէս քեզ նմաններուն շատերն ունին եւ ինամով կը պաշտպանեն բարկութեան աւուր մէջ իրենց դատապարտութեանը համար,

բայց դու բան չունիս եւ դարձեալ ագահ կը կոչուիս, այնպէս չէ՞: Ափսոս, այդ մեծ զրկանք եւ անտանելի զրպարտութիւն է, բայց կեցի՛ր, շուտով չդատենք, քանզի կերելի, թէ դուն ալ ուրիշ ախտով ախտացած ես, ուստի զքեզ ալ աղել մը նկարելու համար՝ բարոյականին տուած սահմաններուն մէջ փոքրիկ փոփոխութիւն մը ընելով, ագահութեան վրայ երկու աչօք նայինք:

Ագահութիւնը, իրաւ է, որ ինչք դիզել է՝ առանց օգտակար գործածութեան, բայց միթէ այս, առանց օգտակար գործածութեան, խօսքը պարա՛պ տեղը դրուած է, ո՛չ, այլ զքեզ մատնանիշ խայտառակելու համար՝ իմաստունը նախատեսած, կամ՝ թէ ըսենք փորձառու եղած եւ դրած է:

Արդ ագահ մը կը ժողվէ եւ կը դիզէ, ագահ մ՛ալ կը ժողվէ եւ կը վատնէ, մէկը կը ժողվէ անօգուտ պահելու համար, միւսը՝ անյագաբար կը ժողվէ անօգուտ վատնելու համար, եւ ահա դու այս երկրորդ տեսակէն ես, որոյ ապացոյց կը ներկայացնեմ քեզ քու հաճոյիցդ, կամացդ եւ կրիցդ բոլոր թելադրութեանց անխափան կատարուիլը: Խնջոյքներ ընել, տեսարաններ երթալ ծպտած, անօգուտ եւ անպիտան ծախսեր ընել, խռովութիւններ յարուցանել, մէկ կողմէն քաշել, գողնալ, կողոպտել եւ միւս կողմէն դատ վաստկելու համար կաշառեր եւ

ընծաներ տալ, վերջապես մսխել, ուր որ քու կամքդ կուզէ: Յերիք է, որ խելքդ փչէ բանի մը ծախք ընել, անօգուտ եւ վնասակար իսկ լինելն ալ ըսեն քեզ, չես համոզուիր, կամացդ անձնիշխանութեանդ դեմ բռնաբարութիւն կը համարիս, իսկ օգտակարին՝ ոչ երբէք, գրկեալին չես օգներ, խնդրողին չես տար, կարօտը չես յագեցներ, իսկ դու միշտ չունիմ ըսելով կ'առնուս, այս քու մոլութեանդ նոր անուն մը տալու համար կը վարանիս, քանզի մի չէ, այլ բաղադրեալ է, ուստի առնելու համար ազահ եւ վատնելու համար շռայլ կ'ըսենք, եւ, տակաւին, մանրանկարդ ամբողջ ակարտած չենք լինիր:

Ո՛վ պաշտօնեայ, ըսէ տեսնենք՝ ի՞նչ կը նշանակէ հովուական պաշտօնիդ մեջ միշտ թերի գտնուիլ եւ շարունակ ժողովուրդն ամբաստանել իբր թէ չեն հոգար, ի՞նչ կը նշանակէ շարունակ ապրուստեդ դժգոհ լինելը, ժողովրդեան օգտին համար կատարելիք մէկ գործոյդ կամ առաջնորդութիւն ընելու եւ, մինչեւ անգամ գիւղի մը քահանայն իր քահանայութիւնը կատարելու համար սակարկութիւններ ընել, փոխ առնուլ եւ չվճարել, պարտք զլանալ, մեծագումար պարտքեր ընել եւ ժողովրդեան վճարել տալ ու դարձեալ ժողովուրդն ամբաստանել, դարձեալ ինքզինք կարօտ ցոյց տալով գանգատիլ ժողովրդէն եւ արհամարհել գայն,

դրամ տալ այլոց, մանաւանդ՝ կարօտելոց եւ տոկոս պահանջել, կ'աղաչեմ, Հա՛յր, ըսէ ինձ՝ այս ամենը ազահուրթիւն, ընչաքաղցութիւն, արծաթսիրութիւն, զոչաքաղութիւն կամ անարգ ու ցած շահախնդրութիւն չէ, ի՞նչ է: Ի՞նչ է նպատակդ, ո՞չ ապաքէն ապրիլ, դու քեզ յանձնուած գործը հաւատարմութեամբ կատարէ, այն ատեն ոչ անօթի կը մնաս, եւ ոչ ալ մերկ, ժողովուրդն իբրեւ հայր կը նկատէ զքեզ, եւ ամէն կողմէ ինամբ եւ ձեռնտուութիւն չեն պակսիր: Սակայն քու աչքդ ակելորդ ցանկութեամբ կը մարմաջի, անոր համար արդար վաստակով եւ չափաւոր կեանքով չես կարող գոհ լինել եւ այդպիսի սրտով, բնաւ, գոհ լինելիք չունիս:

Պաշտօնեայդ եկեղեցւոյ, հասցէ եւ չափաւոր զգեստէ զատ ուրիշ ի՞նչ պէտք ունիս, եւ միթէ ակելորդովն հանդերձ ժողովուրդը հատուցած չէ՞: Դու ժողովուրդը կը քամահրես. զայն հովուելու չես զիջանիւր կամ սակարկութիւն եւ չափազանց վարձք կ'առաջարկես եւ կը կարծես, թէ գոհ պիտի լինիս, բայց մի խաբուիր քու աչքդ Տանտաղոսի ծակ կարասն է. որչափ լեցուի, միշտ դատարկ պիտի լինի, միշտ կարօտ, շարունակ դժգոհ, եւ այդ քու անյագուրդ բաղձանքէդ սովալլուկ պիտի տանջուիս ամէն օր, այդ կեղեքիչ բաղձանքդ շարունակ պիտի կրծէ սիրտդ ու լեարդդ, պիտի գրաւէ հոգեկան

կարողութիւններդ եւ ամէն բարեմասնութեանց անընդունակ պիտի ընէ զքեզ, որով ոչ երբէք կարող պիտի լինիս խորհիլ պաշտօն, պարտք, ժողովուրդ, հոգի եւ Աստուած, քանզի քու այն ազահութեան տենջդ կեդրոնացուցած է այս ամենը մէկ բանի վրայ, այսինքն՝ հարստութեան, որ ունայնութեան մէկ պարզ գաղափարն է, եւ զինքն ստացօղն ալ իրեն պէս կ'ունայնացնէ:

Մարգարեութիւն չեն ըսածներս, Յա՛րք, եղած, կատարուած եւ ամենուն յայտնի եւ ամէն օրեայ իրողութիւններ են պատմածս, զորս որչափ խօսիմ, ինչ կերպիւ ալ բացատրեմ, չեմ կարող այն սոսկալի եւ խորշելի կերպարանքը տալ, ինչ, որ պաշտօնեայ մը ազահութեամբ համակւած ատեն կը տեսնուի, սակայն այսպիսի հրեշներ բազմաթիւ փորձերէ, անարգանքէ եւ զգուանքէ վերջը ցաւալի է, որ տակաւին ժողովրդեան մէջ իբր պաշտօնեայ անպատիժ կը շրջին եւ մեծամեծ պաշտօններու ալ կը հասնին:

Բայց ո՞վ պիտի պատժէ զանոնք, ու՞ր պիտի գտնուի այն անմեղը, որ առաջին քարը ձգէ յանցաւորին վրայ, կամ ու՞ր պիտի գտնուի այն արդարը, որ կարող լինի քաւել պատժապարտը եւ հրամայել: Ե՛րթ, այսուհետեւ մի՛ մեղանչեր. ո՞վ պիտի կրնայ արդար ցասման խարազան ի ձեռին

համարձակութեամբ ըսել.- «Տուն իմ, տուն, աղօթից կոչեսցի, եւ դուք արարիք զդա այրս աւազակա՛ց»։ Եւ այսպէս ո՞վ պիտի կարողանայ սրբել եւ մաքրել Աստուծոյ տունը, հաւատացեալ ժողովուրդը ամէն տեսակ ապականութենէ ու գայթակղութենէ, քանզի արդարեւ այսօր Աստուծոյ տաճարը, այսինքն՝ ժողովուրդը այն հին ատենէն աւելի աղարտուած եւ իր նպատակէն չեղած է, այսօր ոչ թէ անասնոց երամներ կը խռնին հոն, այլ դիւաց բանակներ եւ դժոխոց լեգեօններ, ոչ թէ հատավաճառներու եւ լումայափոխներու միայն տեղի, այլ եւ ամենատեսակ ախտից եւ մոլութեանց բնակարան եղած է, ուրկէ զգուանօք կը հեռանայ սրբութիւնը, իսկ սրբութիւն չեղած տեղն Աստուած չկայ, եւ Աստուծոյ տեղն ի՞նչ յաջողուած եւ ի՞նչ կենդանութիւն պիտի գտնուի։

Արդ չկա՞յ արդեօք մէկը, որ կարողանայ սրբել, մաքրել եւ ի բաց հալածել այս ամէն վնասակարութիւնները, Աստուծոյ ատելի եւ մարդկան բարւոյն թշնամի բոլոր այս անօրէնութիւնները, ո՛հ, արդարեւ, կերեւի, թէ չկայ, քանզի յոտից մինչեւ ցգլուխ չիք առողջութիւնը, եւ քանզի ամենքին խոտորեցան ի միասին եւ անպիտանացան։

Դատաւորը մեղսակցութենէ ազատ պիտի լինի, որ յանցաւորը օրինօք պատժած ատեն՝ նոյն օրինօք

ինքն ալ չի յանդիմանուի, բայց սոսկալի՛ է, արդարեւ, հասարակութեան գայթակղելոյն պատճառ լինիլ: Վա՛յ անոր, որ ուղղութեան պաշտօնն ունի, եւ այլ եւ այլ նկատումներով թիւրութիւնները չտեսնելու կը զարնէ կամ իր անհոգութեամբը եւ կամ՝ որ աւելի ճիշտն է գործակցութեամբը, թոյլ կու տայ զեղծմանց, որ յառաջանան: Մոլութիւնը կը քաջալերէ, արծաթսիրութեան ախտով կուրացած պատժապարտները ի պաշտօն եւ յիշխանութիւն կը կոչէ, չարութեանց արմատանալուն գործադիր ու հեղինակ կը լինի....

Ո՛վ պաշտօնեաներ եկեղեցւոյ, այս չէ մեր կոչումը: Այն նուիրական պաշտօնը, ուր մենք կը կոչուինք, պահանջքներ ունի, եկեղեցին, այսինքն՝ ժողովուրդը, կամ նորա պետքը կը կոչէ մեզ այս առաքիլութեան ասպարիզին մէջ ոչ թէ սուտ ու սնտոի հնարքներով փառք որսալու համար, որ աւելի անարգանք է, այլ մրծելու, տքնելու, նահատակուելու եւ սահմանուած նպատակին հասնելու համար, բայց, ահա, այս մեր զեղծեալ ժամանակիս մէջ կը տեսնենք պարզապէս, որ շատերնիս հետամուտ կը լինինք սուրբ եկեղեցւոյ պաշտօնեութեան զանազան խոտորնակ նպատակներով, սակայն ինչպէս ըսինք, այս պաշտօնն արատ չի վերցներ, արատաւոր պաշտօնեայն մատնանիշ կը

հրապարակուի եւ կը խայտառակուի, ինչպէս սպիտակ առարկայի վրայ սեւ բիծը կամ լուսոյ մօտ խաւարը, նոյնպէս եւ կրօնից սրբութենէ առջեւ զեղծ ու մոլի պաշտօնեաներն աննշմարելի եւ առանց արհամարհանաց չեն մնար. ապացոյցը ագահութեամբ ախտացող աշակերտ մատնիչ Յուդայէն սկսեալ մինչեւ մեր օրերը, մանաւանդ այս դարուս մէջ, այնչափ շատ են, որ այս տեղ նորէն նշանակելու հարկ չենք տեսներ: Ահաւասիկ, սուրբ Ներսէս Շնորհալի իր ժամանակի մէջ գտնուող մեզ նման անարժան պաշտօնէից զեղծեալ վարուց վրայ ցաւելով կը գանգատի. «Իսկ այժմուս թշուառութեան ժամանակի այնքան հեռացաք ի բարեաց նոցին նմանութենէ, մինչ զի ոչ այլ ինչ գործոյ պատճառ գիտել զեպիսկոպոսութիւնն, որոնք յօժարին ստանալ զայն, բայց միայն զանազան հնարիւք ինչս ժողովել ի հնազանդելոցն եւ փառս որսալ ի փառաւորացն, զոր անարգանս պարտ է ըսել եւ ոչ փառս»:

Սուրբ Գրոց բազմաթիւ օրէնքներէն եւ պատուէրներէն չգիտեմ, ո՞ր մէկն յառաջ բերեմ, այլ Սրբազան Առաքելոցն սա մէկ պատուէրը յիշել հերիք կը սեպեմ, որուն մէջ համառօտ բովանդակուած է պաշտօնէին պարտաւորութիւնները. «Արածեցէ՛ք, որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ վերակացու լինել, մի՛

իբրեւ ականայ, այլ կամաւ ըսա Աստուծոյ, մի զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ, մի իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին, զի յերեւիլ հովուապետին ընդունիջիք զանթառամ փառացն պասկ»:

Ինչպէս ամէն մոլութիւն, նոյնպէս ագահութիւնը, արծաթսիրութիւնը, զօշաքաղութիւնը հոգեկան հիւանդութիւն է, որ մարմինն ալ կը տանջէ չարաչար, կը հիւծէ եւ կը սպաննէ: Եկեղեցւոյ պաշտօնէութիւնը դեղի, դարմանի եւ խիստ զգուշաւոր խնամոց կը կարօտի, պէտք է մտնել Աստուծոյ բժշկարանի դեղարանը եւ զօրաւոր դեղեր առնուլ:

Ագահութեան ախտը բուժելու համար հերիք է, որ մի՛ ցանկանար պատուէրը իր բոլորական եւ ընդարձակ նշանակութեամբն հասկնանք, ընդունինք եւ զգուշութեամբ ու երկիւղածութեամբ գործադրենք՝ ինչպէս որ հրամայած ու պատուիրած է համայնից Բժշկապետը:

Ուրեմն թողունք այս եւ տեսնենք, թէ խռովարարութիւնն ինչ երեւոյթ ունի եկեղեցւոյ պաշտօնէին վրայ:

Ե.

ԽՈՒՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ ազահութեան եւ ցանկութեան ծնունդներէն մինն ալ: Ամէն լաւութեանց եւ բարեկարգութեանց եղծիչն է խռովարարութեան կիրքը:

Ունայնամիտ փառասիրութիւնը, ամբարտաւանութիւնը եւ կոյր նախանձութիւնը շարժիչ են սոյն դժոխային կրից, որուն անձնատուր եղողը, ցաւալի է խոստովանիլ, ժանտախտէ բռնուածի պէս չէ կարող ազատիլ: Խռովարարը յուզեալ եւ դիւրագրգիռ սիրտ մը կունենայ, բարկացող եւ ժանտ կը լինի, ատեցող, ինքնահաւան, կամապաշտ է, որով եւ, իրաւամբ, ատելի է ամենուն: Վասն զի ընտանեաց, ժողովրդեան եւ ազգի խաղաղութիւնը կը վրդովէ, սրտերը կը յուզէ եւ կը տագնապէ եւ անթիւ չարիք կը սերմանէ իբր հաւատարիմ արբանեակ չարին: Խռովարարը օրէնքներու ալ ընդդիմակաց է, քանզի ամէն արդար օրէնք հասարակաց խաղաղութիւնը կապահովէ, իսկ խռովարարը զայն կեղծանէ:

Ահաւասիկ, բովանդակ տիեզերք խաղաղութեամբ է, որ արդիւնաւորութեան եւ յարատեւութեան մէջ կը կենան, եւ այս արդիւնքն յառաջ բերողն

Է աստուածային իմաստութեան դրած յաւիտեական օրէնքը, որ, ներհակներն ի միասին համածայնեցնելով, խաղաղութիւն ըրաւ եւ գոյութեան ու գեղեցիկ կարգի բերաւ ամէն բան, ուրեմն խռովութիւնը շփոթող է եւ խանգարող կարգի, եղծիչ լաւութեան, ապականարար և վախճանիչ ամենայնի, հետեւապէս անհնազանդ է բնութեան օրինաց, ընդդէմ բարոյական օրինաց եւ ապստամբ քաղաքականին. ճիւղ մ'է նա, գոյութեան գաղափարն իսկ վնասակար է աշխարհի:

Խաղաղարարը Աստուծոյ որդի կ'անուանի, ուրեմն խռովարարը որդի է սատանայի եւ ծնունդ դժոխոց, ուստի մարդ կոչուելու եւ աշխարհի մէջ ապրելու իսկ արժանի չէ. նա տարտարոսի խաւարին եւ անյուշութեան լճին մէջ երթայ իր ժանտ կրից ստեղծած ուրուկանաց եւ ստուերի հետ ոգորի առանց մեկուն վնասել կարենալու:

Խռովայոյզ անզգամին հասուցած չարիքն անհնար է մանրամասնաբար թուել, վասն զի ամէն դիպուած եւ առիթ, ամէն պարագայ եւ հանգամանք այլ եւ այլ շարժառիթներ են, որ կը յուզեն զխռովարարը, եւ նա ամէն տեսակ չարիք կարող է հասցնել, զորս անհնար կը լինի թուել, ուստի ընդհանրապէս այսչափ ըսելէ վերջը անձնիք այժմ

սոյն վատթար կիրքը, մասնաւորապէս եկեղեցւոյ պաշտօնէից վրայ նկատել:

Տիեզերաց մեջ ամէն բան իրենց անունն ու գործն ունին, եւ ամենքն ալ ըստ անուան եւ ըստ պաշտաման անխափան յառաջ կ'ընթանան դէպ իրենց սահմանեալ նպատակին, անձն իր, արարածն իր անուան եւ գործոյն տէրն ըլլալով կը ծառայեն Արարչին կամաց: Անպտուղ ծառը կը կտրենք եւ կրակը կը ձգենք: Մենք եւս տիեզերաց մեջ արարած մը ենք, մենք եւս մեր անունը եւ գործն ունինք, բայց, ահա, կը տեսնենք, որ մենք մեր ոչ անուան եւ ոչ մեր գործոյն տէրն ենք, քանզի արդիւնաւորած չէ մեզմէ՝ ինչ որ մեր պաշտօնը կը խոստանայ, ինչ որ մարդիկ կ'ակնկալեն եւ ինչ որ Աստուած կը պահանջէ, եթէ պտուղ տալիք ծառ մը պտուղ չտալով կարել եւ կրակը ձգել հարկ է, հապա ի՞նչ ընել պետք է այն ծառը, որ բարի եւ օգտակար պտուղ տալու տեղ չար եւ վնասակար պտուղ կուտայ:

Մենք որ խաղաղութեան հրեշտակ, բարութեան աւետարանիչ կ'անուանինք եւ միջնորդ հաշտութեան կոչուած ենք, ինչու՞ այս գեղեցիկ անուան արժանաւոր լինել չենք ճգնիր, ինչու մեր կոչումը չենք յարգեր, միթէ մենք բնութենէ դուրս արարածներ ենք. չէ՞ որ մենք եւս նոյն խաղաղասեր Արարչին արարածներն ենք, ո՞չ ապաքէն բնութեան

օրինաց սահմանադիր՝ սիրոյ եւ բարութեան Յօր որդիքն ենք, ի՞նչ երեսով, Յա՛յր Մեր, կը կոչենք զայն, որոյ կամաց հակառակը գործելով կը վշտացնենք զնա եւ կօտարանանք անկէ, ո՞րչափ մեղապարտ ենք մենք, որպիսի՛ դատապարտութեան արժանի ենք մենք, քանզի որչա՛փ հեռացած ենք մեր կոչումէն, նպատակէն եւ սահմանէն եւ որչափ ներհակած ենք մեր բարի Արարչին սուրբ կամացը դէմ եւ քանի վտանգաւոր հետեւանքներ սփռած ենք մեր շուրջը:

Ո՛վ Յա՞րք իմ, եթէ աստուածային օրինաց խաղաղասեր տրամադրութիւնն ու իմաստուն կարգադրութիւնը տիեզերաց ընթացքէն չենք կարող իմաստասիրել, եթէ անցեալ պատմութեանց ընդարձակ ասպարիզին մէջ չենք կարող պայծառ նկատել եւ տեսնել խռովութեան չար հետեւանքը, եթէ Աստուծոյ օրէնքներն ու պատուէրները չեն ազդեր՝ յաստուածային սիրոյ հեռացած այս մեր սառած եւ քարացեալ սրտին, գոնէ մեր ներկայ գործոց հետեւանքները թող խրատեն մեզ: Ազահութեամբ եւ այլ եւ այլ ցանկութեամբ վարակեալ կոյր առաջնորդաց սերմանած խռովութենէ եւ ատելութեան հետեւանքը չէ՞ այս ընդհանուր անբարեկարգութիւնը, ըմբոստութիւնը եւ զեղծմունքը, խռովայոյզ պաշտօնէից սերմանած գայթա-

կղուբեան արդիւնքը չէ՞ ժողովրդեան անհանգստութիւնը, իրարու հետ անմիաբան եւ հակառակամարտ լինելը, վարչութիւն պարտասելը, դատարաններ յաճախելը եւ բանտեր լեցնելը:

Վերցնենք անգամ մը յերկիր կորացած մեր գլուխները, սրբենք եւ ուղղենք մեր բժժուած եւ շլացած աչքերը, քաջ զննենք Աստուծոյ եկեղեցին, ողորմելի՛ ժողովուրդը, որուն դժբաղդաբար պաշտօնեայ կարգուած ենք, լաւ նկատենք եւ տեսնենք նորա հոգւոյն մահացու վերքերը, որոնց համար կ'ըսուի, թէ մեր ձեռօք բացուած են, վասն զի մեզ առաջնորդ կարգեցին, որ զանոնք ի լաւն յորդորենք եւ անոնց զնացքը ուղղենք, մենք մեր ժանտ ընթացքով, մեր դժնդակ վարքով, մեր խռովայոյզ կիրքով ալ աւելի խոտորեցինք զանոնք դէպ ուղիղ նպատակն առաջնորդող ճանապարհէն, մեր անսպառ ցանկութեամբ եւ անյագ ազահութեամբ վրդովեցինք անոնց խաղաղութիւնը, ամէն ժամանակ խռովութիւն, երկպառակութիւն եւ ատելութիւն սերմանելով՝ եղբայր եղբոր դէմ զինեցինք, բուն իսկ մեր օրինակով զանոնք վարժեցուցինք խռովութեան, որով Աստուծոյ որդեգրութենէն զրկելով ի հոգեւորս եւ ի մարմնաւորս վշտացուցինք եւ սաստկապէս վիրաւորեցինք, որոյ դարմանն հոգալ մեզ կ'իյնայ: Մենք ժողովրդեան մեջ չերեւցանք

սիրով, քաղցրութեամբ, հանդարտութեամբ եւ հեզութեամբ, ինչպէս վայել էր Քրիստոսի աշակերտին, մենք չունեցանք այն սուրբ նախանձաւորութիւնը, որով նախնի Չարք կը վառէին Աստուծոյ կամքը կատարելու եւ կատարել տալու համար. անոնք սիրով եւ զորութեամբ Չոգւոյն գինուած ամէն անպատեհութեանց առաջքը կ'առնէին: Իսկ մենք ընդհակառակն անձնական սնտոյ կիրքերով յուզուած, բորբոքած Աստուծոյ եկեղեցւոյն վրայ անհոգ գտնուեցանք, անկարգութիւնները ոչ թէ միայն չուղղեցինք, այլ, եւ մենք ինքնին յամառ կամապաշտութեամբ զայն արմատացուցինք եւ զանազան անտեղութեանց պատճառ դարձանք, քանզի մեր այս ընթացից հետեւանքն եղաւ ժողովրդեան մեղաց եւ մոլութեանց մէջ անխտիր լինելը, որ հեթանոսական անաստուած ապականութիւն է եւ ոչ քրիստոնեական սրբութիւն, ամէն տեղ յուզմունք, անկարգութիւն, շփոթութիւն եւ անհամաձայնութիւններ տիրեց, որ դիւային ոգւոյն ախորժելի ճենճերահոտ նուէր մ'է, իսկ Տեառն մերոյ խաղաղարար ու քաղցր սգւոյն ներհակ ուղղուելի:

Քաղաքական եւ ընտանեկան պաշտօնեաները շարունակ ընտրութեան, փոփոխութեան եւ պատժոյ կ'ենթարկին, ի՞նչ պիտի լինի մեր արժանիքը, որ ազատ կացուցանէ մեզ այդ արդարութեան հատու-

ցումեն, անշուշտ, կատարելութիւն, եթէ մեր պաշտօնի սրբութիւնը եւ աստուածայնութիւնը բացառութիւն ընդունած է իր պաշտօնէից համար, ուրեմն պետք է արժանաւորինք անոր, ապա թէ ոչ ապաշնորհ պիտի համարուինք: Ամէն ծառայ եւ պաշտօնեայ կ'աշխատի իր տիրոջ հաճոյ լինիլ, որ գովութեան արժանանայ, իսկ մենք կարծես մրցում մը ունինք մեր տիրոջ կամաց ներհակն ընելու եւ անոր խոտելի երեւնալու, սակայն պետք է հաւատանք, որ պարտուց եւ իրաւանց մէջ գտնուող անողոքելի արդարութիւնը, յաւիտենական օրինաց մէջ գտնուող անկաշառ դատաւորը բնապէս եւ բարոյապէս կը պատժէ պարտագանցը:

Թողունք հանդերձեալը, որ արդարութեան օրինօք պատրաստուած է, միթէ կենցաղոյս մէջ մեզ պաշտամանց ներհակ գործելով պատիժներէ ազատենք, քա՛ւ լիցի, այսչափ անարգ հրատարակութիւններ, այսպիսի անպատուութիւններ մարդ եղողին համար քի՞չ պատիժ են: Պաշտօնին անարգուիլը, սրտի եւ մտաց հանապազօրեայ տազնապն ու վրդովմունքը, Աստուծոյ խօսքին չխօսուիլն ու չստուիլը պատուհաս չեն, ի՞նչ են, բայց այս ամենը սիրտ ունեցողը միայն կը զգայ եւ մարդ եղողը միայն կրնայ խրատուիլ եւ ուղղուիլ: Կարծես ճիշտ այն ժամանակն ենք, որոյ համար մարգարէն

Աստուծոյ կողմէն պատուհաս կը գուժէ ըսելով. «Սով պիտի տամ, բայց այս սովը ոչ հացի եւ ոչ ալ ջուրի սով է, այլ Տիրոջ խօսքը չլսելու սով»: Քանզի ահա իսկապէս կը տեսնենք, որ Աստուծոյ խօսքը անարգուած թէ չի խօսուիր եւ թէ չի լսուիր, ինչու՞, վասն զի այսչա՛րի կիրքերով վարակեալ Աստուծոյ բանին քարոզիչքս մեր քարոզածէն օգուտ չշահելով, մենք մեզ արժանաւոր չընելով՝ նորա արժէքն ու ազդեցութիւնն ալ կոտրած ենք, եւ այժմ այնպիսի բաներ կուզենք քարոզել, որպէսզի լոկ մեր հանճարը ցոյց տանք, եւ ժողովուրդը զարմանայ, բայց չշահի, քանզի այն ատեն նոյնը մեր վրայ ալ պիտի բնտռէ: Խռովայոյզ պաշտօնեայ մը ո՞ր անպատկառ երեսօք պիտի համարձակի խաղաղասիրութիւն քարոզել:

-Պաշտօնեաները պէտք է հանդարտ լինին,- ըսաւ Առաքեալը,-պէտք չէ զարնող ու կռուող լինին, այլ համբերող, հեզ, ժուժկալ եւ հիւրասեր, Աստուծոյ տանը աղէկ վերակացութիւն պէտք է ընեն, այսինքն՝ ժողովուրդը լաւ կառավարեն, կրթեն եւ Աստուծոյ օրէնքով սուրբ եւ բարի վարուց մեջ դաստիարակեն: Բայց մենք ու՞ր եւ այս պարտա-կատարութիւնն ուր:

Արդ քանի որ մենք ըստ ամենայնի մեր անուան, պաշտօնին եւ մեր պարտուց ներհակը կը գործենք, անշուշտ, ազատ չենք արդարութեան հատուցանե-

լիք պատուհասէն, եւ քանի որ մենք ծառայ մի, գործաւոր մի, մշակ մի՝ իր զանցառութեանց, ընդդիմութեանց եւ թերութեանց համար կը պատժենք, պետք է ուրեմն իմաստասիրենք, թէ մեզ ինչ պիտի պատահի: Քանզի մենք ալ Տէր մը ունինք, որ եթէ նոյնպէս վարուի մեզ հետ, արդարութիւն ըրած կը լինի, բայց բարեբաղդաբար մեր Տէրը երկայնամիտ է, միշտ եւ անմիջապէս չի հատուցաներ եւ պատժոյն բովանդակ մեծութիւնն ու ծանրութիւնը մեկէն չի հասցներ, այլ բիւր օրինակով, դէպքերով, առիթներով կը խրատէ մեզ, որպէսզի ուղղութեան ճանապարհը մտնենք, իսկ մենք կամակոր եւ կամապաշտ լինելով ոչ կը զգանք եւ ոչ ալ խրատուիլ կուզենք, սակայն որչափ յամառ եւ անդարձ մնանք, այնչափ ալ դատապարտութիւնը կը սաստկացնենք եւ կը կրենք թէ կենցաղոյս մեջ, եւ թէ ի հանդերձեալն:

Մենք խաղաղութիւն եւ սեր կը քարոզենք ժողովրդեան, մենք խաղաղութեան պաշտօնեայ լինելնիս բանիւ եւ արտաքին ձեւերով կը յայտնենք անոնց եւ խաղաղութեան դրոշակով կը մտնենք անոնց մեջ, բայց մեր աչքերէն յուզմունք կը ցոլայ, եւ մեր ձեռքերէն երկպառակութիւն կը սփռի: Մեր խօսքերը գրգռիչ են, եւ մեր լեզուն երկսայրի սուրի պէս դպած տեղը մահաբոյր վերքեր կը բանայ: Ամէն

օր Աստուծոյ տան մէջ «խաղաղութիւն ամենեցուն» կը գոչենք բերանով, բայց արդեամբ խռովութիւն կը ներշնչենք, ժողովրդեան հոգւոյն վերքերը բուժելու տեղ անելի կը զայրացնենք, եւ զինքն իր դաւոց անզգայ ընելու համար, բան չկայ, հոգ մի՛ ըներ, առողջ ես, կ'ըսենք, բայց երբ ժողովուրդը խռովութեամբ այնքան յուզի, որ ալ առաջքն առնուլ անհնար լինի, այն ատեն կը սկսինք ժողովուրդէն գանգատիլ եւ արտաքին միջամտութեան կարօտիլ եւ մեր յիմարութեամբը կուզենք, որ այն միջամտող խաղաղարարը մեզ ի սպառ արդարացնէ եւ միայն ժողովուրդը դատելով ու դատապարտելով խաղաղութիւն ընէ, եւ այս նպատակին հասնելու համար ուրիշ անվայել միջոցներու կը դիմենք....:

Վա՛յ մեզ՝ նման կոյր առաջնորդներուն, որ լոկ անուանական առաջնորդներ եւ պաշտօնեայներ ըլլալ կուզենք. պարտիզի մէջ տնկուած խրտուիլաներ ենք, ուր ապականիչ կենդանիք մեկզմէկ բզկտելով պարտեզը տակն ի վրայ կ'ընեն, իսկ մենք միշտ անզգայ ենք, կամ թէ, կարծես, Երեմիայ մարգարէն այսօր իսկ Աստուծոյ կողմէն կը գանգատի՝ մեր վրայ ըսելով. «Դուք իմ ժողովրդեանս վերքերուն անհոգութեամբ նայեցաք եւ խաղաղութիւն է, խաղաղութիւն է ըսիք, քանի որ խաղաղութի չկար»:

Ի՞նչ դառն վիճակ է այս, Չա՛րթ, պատրուակելը նենգել է, նենգելը խաբել է, խաբելը մահու չափ վնասել է, որ չի վայելեր ոչ կրօնաւորին եւ ոչ որ եւ իցէ մարդուն: Արդ՝ եթէ մենք խռովութեան արբանեակներ ենք, ինչու՞ վատութեամբ մեզ կը ծածկենք, ինչու՞ խաղաղութեան սիրուն հրեշտակի գեղեցիկ կերպարանօքն ու բերկրառիթ համբաւովը կը շպարինք եւ կը ծպտինք, իսկ ի ներքուստ խռովարար ու ժանտաժուտ կը լինինք:

Ի՞նչ պիտի ընենք, երբ ՏԵր Աստուած իր փրկած հօտին այցելութիւն ընէ, եւ, երբ մեզ նման վարատող եւ ցրուող հովուաց վրայ, իր արդար բարկութիւնը բռնկի: Անտարակոյս խռիւի պէս պիտի այրէ մեր կիրքերն ու գործերը եւ պիտի խորտակէ, փշրէ եւ ցրուէ մեր հպարտութիւնն ու ամբարտաւան խորհուրդները: Փոխուիլ պէտք է, Չա՛րթ, այս ճանապարհն անել է եւ վտանգաւոր:

զենք փառք ժառանգել, պէտք է ճիշդ մարիտ փառաց փախարխմք, որ հաճեաստութեան, խոնարհութեան եւ չարիաւորութեան մէջ է. ճշմարիտ փառքը չի գտնուիր հարստութեան, գուտգութեան եւ շքեղազարդ երեւելի հանդերձներով պճճազարդելու մէջ. միմիայն անթերի պարտականարութեամբ կարող է մարդ արժանաւորիլ ճշմարիտ փառաց:



Չ.

ՊՃՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Երեւեցի՞նք պաշտօնէից ՊՃՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ չք գիտեմք ինչ մեկնութիւն տալու է. եթէ բուն պճճասիրութեան նշանակութեամբ հասկանամք, չք վայելէր կրօնաւորին, քանզի ամօթ է, իսկ ուրիշ մեկնութիւն չեմք կարող տալ, քանզի պատրուակած պիտի լինիմք: Արդ սրովհետեւ պճճասիրու-

2.

ՊՃՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյ պաշտօնէից պճնասիրութեան չգիտենք ինչ մեկնութիւն տալու է, եթէ բուն պճնասիրութեան նշանակութեամբ հասկանանք, չվայելէր կրօնաւորին, քանզի ամօթ է, իսկ ուրիշ մեկնութիւն չենք կարող տալ, քանզի պատրուակած պիտի լինինք: Արդ՝ որովհետեւ պճնասիրութիւնը կրօնաւորին չվայելէր, հարկ է, ուրեմն նշաւակել նորա անպատկառ երեւոյթքը:

Պճնասերը ունայնամիտ է. ճշմարիտ իմաստութիւնն ու առաքինութիւնը չբնակիր ունայնամիտ զարդասիրին սրտին ու մտքին մէջ, ուստի յիմար է նա, որ խենեշուրթեամբ հագուիլ-չքուիլ կը սիրէ:

Հանդերձը մարմնոյ ծածկութի համար է, ի՞նչ հարկ կայ աւելորդ հանդերձներով բեռնաւորիլ եւ ծաղրելի զարդերով պճնիլ, քանի որ պարզ հանդերձ մը մեր պէտքը կարող է հոգալ:

Մարդուն ճշմարիտ զարդն է իր հոգւոյ կատարելութիւնները, համեստութիւնը, առաքինութիւնն ու իմաստութիւնը, եւ սոցա կը վայելէ ընծայել արժանաւոր փառք եւ վայելուչ պատիւ. պճնասեր

եղողը այս ամեն կատարելութենէ զուրկ լինելը կը յայտնէ, քանզի չունենալով ճշմարիտ արժանիք եւ իրական վայելչութիւն, կուզէ արտաքին շքեղութեամբ փառք ու պատիւ ստանալ, բայց իրեն պէս պակասամիտներու զարմանքը միայն կրնայ գրաւել. այլ իմաստնոց առաջեւ ծաղրու ծանակ կը լինի: Մեր այս ըսածներէն չկարծուի, թէ գծծութիւնը կը պաշտպանենք եւ անոր բարոյական հանգամանք կընծայենք, ո՛չ, այլ մեր խօսքը չափաւորութեան, պարզութեան եւ համեստութեան համար է:

Պճնասիրութիւնը կանացի հանգամանք մըն է, կարծեմ՝ բաւական ամօթ է մարդու մը, որ կը զիջանի կանանց պէս պճնելու մտադրութիւն դարձնել: Կանանց մէջ անգամ երբ չափազանց վայելչասիրութեամբ պճնազարդեալ մէկը տեսնենք, նորա վրայ բարի համարումն չենք ունենալ, անհամեստ, լկտի եւ այլն կանուանենք, այլ պճնասեր կրօնաւորն ի՞նչ անուանենք...:

Անհամեստ ու զարդամոլ կանայք իրենց արդ ու զարդովը կուզեն զարս հրապուրել, անոնց կիրքերը գրգռել եւ մեղաց ու մոլութեան որոգայթին մէջ ձգել, որ սատանայի գործ է եւ ոչ մարդու, ուրկէ խելացիները զգուանօք աչքերնին կը դարձնեն, իսկ անմիտները կապշին ու բերանաբաց կը նային՝ առանց զգալու իրենց հոգւոյն եւ սրտին մէջ ըն-

դունած վերքին ցաւը, որ քաղցկեղի պէս կը ճարակի եւ կը խոցոտէ մարմինն ու հոգին եւ կապականէ գեղեցիկ վարքն ու բնաւորութիւնը: Իսկ երիտասարդք ալ կը պճնին իրենց ունայնամտութիւնը ցոյց տալու, եւ թեթեւս զարդամոլ կանանց համամիտ լինելնին յայտնելու եւ անոնց խորհրդոց պատասխանելու համար, որով երկուքն ալ իրենց մտքի դատարկութեան եւ սրտի ապականութեան հաւաստին տուած կը լինին: Սակայն եկեղեցւոյ պաշտօնեայն ի՞նչ վախճանի համար կը զարդարուի, եթէ նպատակը վերոյիշեալները չեն, ուրեմն ի՞նչ են, եթէ պճնասիրութիւնը ասանկ անպարկեշտ ու հեշտախտային խորհուրդներ կը պարունակէ, ամօթ չէ եկեղեցականին, որ այսպիսի անսուրբ խորհուրդներով զբաղի եւ այս կերպ զգուելի կարծիքներ հրաւիրէ իր վրայ:

Պճնասիրութիւնը վտանգաւոր մոլութիւններէն մին է, զոր խափանել կը պարտի եկեղեցականը եւ ոչ թէ իր օրինակովն ալ քաջալերել: Ո՞րչափ հարուստներ փճացուցած է պճնասիրութիւնը եւ քանի՞ աղքատներ յուսահատեցուցած է, միթէ անոնց պատասխանատու չե՞ն եկեղեցւոյ պաշտօնեաները, որ չեն խրատեր եւ վնասակարութիւնը ցոյց տար, մանաւանդ պճնասեր կրօնաւորք, որ իրենց օրինակով թելադրիչ կը հանդիսանան:

Կը յիշէք, անշուշտ, Յարք, որ Մ. Պատրիարք Յայրիկը պճնասիրութեան դէմ քարոզ մը տուաւ եւ օրիորդ մը լրագրաց միջոցաւ պատասխանեց. «Նախ՝ քու եկեղեցականներդ խրատե եւ զգուշացուր», եւ Նոյն յօդուածին մէջ նկարագրած էր պճնասէր կրօնաւորը իր բոլոր խենէշ կերպարանօքն ու լկտի շարժմամբը, չպատկառեցա՞ք, զարդասէր Յա՛րք: Եթէ այսպիսի անարգութիւններէ ամօթ չէք կրեր, կը նշանակէ, թէ դուք ձեր պատիւը կորուսած էք, վասն զի ինչպէս ըսած է իմաստունին մէկը. «Ով որ պատիւը կորսնցնելէ կը վախնայ, այնպիսին իր անձը անկարգութիւններէ կը զսպէ եւ անպատուութենէ կը զգուշանայ, իսկ անգամ մը զայն կորսնցնողը կը համարձակի առանց ամօթոյ ամէն չարիք գործելու: Նոյն օրիորդը, թէ որ զարդասէր է, այդպէս ընելով թեպէտ իր անուղղայութիւնը յայտնեց, սակայն դուք չէ՞ք խղճեր, որ պատճառ տուիք Նորա այդ համարձակութեան եւ չհամոզուեցա՞ք տակաւին, որ ձեր օրինակովը զեղծման առաջնորդած էք ժողովուրդը եւ պատասխանատու էք անոնց չարեաց, մեղաց եւ մոլութեանց:

Յիսուս Քրիստոս վա՛յ կը կարդար կեղծաւոր Փարիսեցիներուն անոնց պճնասիրութեան համար, երբ կը նախատեր ու վար կը զարներ անոնց

փառաւոր ու երեւելի հանդերձներով շրջելու բաղձանքը, միթէ մեզ համար բացառութիւն ըրա՞ւ. «Հանդերձի համար մի հոգայք եւ երկու հանդերձ մի ունենաք», արգելական պատուէրներն ինչպէս ամէն մարդու համար, միթէ նոյնպէս, եւ առաւել եւս մեզ համար ալ չէ՞:

Մեղք է, Հարք իմ եւ եղբարք, ափսոս է այն հոգև ու մտածմունքը, զոր կը վատնենք ցեցերու կուր լինելիք հանդերձներն ստանալու, պահպանելու եւ մանաւանդ անոնցմով զարդարուելու համար: Այդ հսկողութիւնն ու մտատանջութիւնը եթէ ոմանց բարուց ուղղութեան եւ հոգւոյ փրկութեան վրայ ըրած լինէինք, ո՞րչափ արդիւնաւոր եւ մխիթարական էր թէ մեզ, եւ թէ այլոց համար:

Պճասսիրութեան ետեւէ մոլորեալ եկեղեցականը իրաւունք կուտայ այլոց կարծել, որ փառամոլ, խաբեբայ, շռայլ, ցանկասեր եւ վաւաշոտ է, քանզի ինչպէս եզնիկ կըսէ. «Չարդարուող կրօնաւորը դեւերու հիւրընկալէ», ուստի եւ իր խորհուրդներն ու գործերն ալ դիւային են, որ չեն վայելեր կրօնի սրբութեան: Ուրեմն մեծն Աղէքսանդրի ըսածին պէս պէտք է կամ անուննիս փոխենք, կամ գործերնիս, քանզի Աստուած սուրբ է եւ կը կամի, որ մենք ալ սուրբ լինինք, քանզի կոչեաց մեզ Աստուած ի սրբութիւն եւ ոչ ի պղծութիւն:

Որպեսզի չըստիպուհինք աւելի անպարկեշտ
իրողութիւններ յայտնել, այս մասին այսչափ հերիք
սեպելով՝ անցնինք օրինազանցութեան վրայ ալ քիչ
մը խօսիլ եւ վերջացնել:

Է.

ՕՐԻՆԱՑ ԱՐՅԱՄԱՐՅՈՒԹԻՒՆ

Յայտնի է, որ օրենք մը կը հաստատուի անկարգութիւններ կարգաւորելու եւ թիւրութիւնները կարգաւորելու եւ թիւրութիւնները ուղղելու համար: Առ հասարակ օրենքն այն տեղերն զգալի կը լինի, ուր անկարգութիւններ կը յաճախեն: Օրենք եղած տեղը նորա տրամադրութեանց դէմ տեղի ունեցած շարժումները, եթէ օրենք գրուելէ յառաջ լոկ թերութիւն կը համարուին, օրենքը սահմանուելէն վերջը այն ամէն զանցառութիւններ եւ ընդդիմութիւններ կը լինին յանցանք, մեղք եւ ոճիր: Ինչպէս առիթ ունեցանք շատ տեղ ցոյց տալ, թէ օրենք չեղած տեղը հաստատուն բարութիւն չլինիր, նոյնը վերստին կը կրկնենք:

Քանզի ուր որ օրենքը չիշխեր, այն տեղէն կարգաւորութիւն յուսալն անմտութիւն է, եւ ուր կարգ եւ կանոն չըկայ, այն տեղ ուղղութիւն չեղած տեղն անհնարին է, որ բարի բան մը հաստատութիւն գտնէ:

Եթէ օրենքը չէ իշխողը, ուրեմն կիրքն է, եւ հնազանդութիւնները կիրքերու նուիրուած են, ո՛հ եւ

ի՞նչ աղետալի կը լինի այն տեղին վիճակը, ուր մարդկային յեղեղուկ եւ անսանձ կիրքերը կը տիրեն: Անդ անոր ամէն բան շփոթութեան մէջ կը լինի, ամէն մարդ իր միտքը, իր գործը լաւ կը համարի, անդ մոլութիւններ անսանձ կը յառաջանան, անգթութիւնը եւ գրկանք, սուր կը շողացնեն, ստութիւնն ու խարդախութիւնը, կեղծաւորութիւնն ու նենգութիւնը օձի պէս կը սողան եւ անմեղ սիրտն ու հոգին կը թունաւորեն: Նախանձը, ատելութեան, անարգանաց եւ ոխակալութեան կամ վրէժխնդրութեան դաշնակից լինելով, խաւարի մէջ թակարթներ կը լարէ եւ բազմիցս կը յաջողի արդարութիւնն ու անմեղութիւնը թակարթել, յառաջադիմութիւնը, լուսաւորութիւնը, ազգային օգուտն ու բարիքը այն տեղ, այն խաւար ծուղակին մէջ կաշկանդել, եթէ ոչ կորուսանելու՝ գէթ առ ժամանակ մը արգիլելով անոնց արդեանցը խափանարար լինելու համար: Վասն զի արդարութեան վրայ հիմնուած շրջահայեաց եւ անաչառ օրէնքը չէ, որ կիշխէ, այլ շահախնդրութեան ջախջախ եղեգան կռթնած, անձնասէր կամապաշտութեան կապտութեամբ գինուած, հազար նկատումներով, բիւր երկիւղներով եւ կասկածներով շրջապատեալ կիրքն ու կամքն է անդ իշխան եւ կռվարար, որ հրամաններ կընէ: Եթէ հասարակաց վնասակար ալ լինին, սակայն ինքը կը

պնդէ եւ գործադրութիւնը կը պահանջէ, եթէ իրեն վնասակար լինին, ուրիշ պատճառներով ետ կառնէ, շինելու տեղ կեղծանէ, կանգնելու տեղը կը քանդէ, եւ այսպէս թէ՛ ինքն, թէ՛ ժողովուրդը կատաղի փոթորիկներով յուզուած ծովուն ալեաց մէջ աստանդական տատանող նաւուն կը նմանի, որ ոչ կարող է հանգիստ լինիլ, եւ ոչ դէպի իր նպատակը դիմել, այլ շարունակ իր կորստեան վտանգին սպասելով կը ծփայ եւ կը հեծէ: Վա՛յ, ուրեմն այն խեղճ ժողովրդեան, որ առանց բարեկարգ օրէնքի առաջնորդուի, բայց եւ առաւել վա՛յ այն առաջնորդին, որ ժողովրդեան լաւութեան համար սահմանուած օրէնքը կարհամարհէ: Եթէ օրէնք հաստատողը օրհնութիւն պիտի ստանայ, ուրեմն անե՛ծք անոր, որ օրէնքը կարհամարհէ եւ կեղծանէ:

Հարկ չկայ կարծեմ եկեղեցւոյ պաշտօնէից օրինազանց համարիող լինելը հաստատելու կամ ժխտելու: Վասն զի մինչ ցարդ մեր խօսածներէն կը հասկցուի, որ անոնք, իբրեւ օրինաց աւանդապահներն ըլլալով հանդերձ, իրենց ապօրինի գործերովը օրէնքներն արհամարհած եւ օրինազանց գտնուած են, որով այսչափ չարիք հասուցած են ազգին եւ իրենց գլխուն:

Որչափ ցաւալի է տեսնել եկեղեցւոյ պաշտօնեայն, Աստուծոյ հօտին առաջնորդը, որ օրէնք

կարհամարիէ, մինչդեռ իրմէն օրէնք կը պահանջուի, բայց ի՞նչ կը լինի իր արհամարհանաց հետեւութիւնը, լսենք Տիրոջ. «Քահանային շրթունքը պէտք է գիտութիւն պահպանէ եւ անոր բերնէն օրէնք պիտի խնդրուի. ինչու որ ամենակալ տիրոջ հրեշտակն է, իսկ դուք ճամբէ դուրս ելաք, եւ շատերը օրէնքին նկատմամբ գայթակղեցուցինք...ես ալ զձեզ, բոլոր ազգաց մէջ արհամարհած եւ երեսի ձգուած թողելով, անարգեցի, պատճառ որ իմ ճանապարհս չպահեցիք, այլ օրէնքը կը ծռէիք եւ ակնառութիւն կընէիք»: Աստուած ամենաբարին ինքն գոլով ծայրագոյն բարի, կուզէ, որ իր բանական արածներն ալ բարութեամբ եւ կարգապահութեամբ անցնեն սոյն կենցաղական յաւիտենիս շրջանը եւ անվախճան յաւիտենին մէջ արժանաւորութեամբ մտնել պատրաստուին, ապա թէ ոչ ինչպէս անբան ու անզգայ արարածոց վրայ օրէնք մը կիշխէ եւ այն օրէնքէն դուրս ելնողը, անշուշտ, իր երջանկութենէն, հանգստութենէն եւ մինչեւ իսկ կեանքն ալ կը զրկուի, նոյնպէս եւ բանական էակին, մարդուն համար ալ բաց ի բնականէն՝ բանական օրէնքներ ալ տրուած է, որոնց ներհակողն եւ զորս արհամարհողն ալ իր ներհակը պիտի կըրէ, քանզի այսպէս կըսպառնայ Աստուած. «Իմ ժողովրդեանս առաջնորդներն իրենց փափկութենէն պիտի իյնան եւ

իրենց չար ընթացքին համար պիտի մերժուին»։ Ահա ես այդ հովիւներուն հակառակ եմ եւ անոնց ձեռքէն իմ խաչներս պիտի պահանջեմ եւ անոնց բերնէն պիտի ազատեմ զանոնք, որ ալ անոնց կերակուր չլինին, եւ այդ հովիւներն ա՛լ չպիտի արածեն իմ խաչներս։ Հանեք այդ չար ծառայն արտաքին խաւարը, այնտեղ թող լայ եւ ակռաները կրճտէ։

Այսպէս ահա աղետալի է այն եկեղեցւոյ պաշտօնէին ներկայ վիճակը եւ վախճանը, որ իր կոչման ու պարտաւորութեանց ներհակը գործելով պարտազանց կը լինի ու քար գայթակղութեան կը դառնայ անմեղաց առջեւ։ Արհամարհելի է նա ազգաց եւ աղանց մէջ. Աստուծոյ երեսէն ձգուած չարաչար մոլորութենէ ի մոլութիւն կը գլորի միշտ եւ իրեն համար աղետալի վախճան կը պատրաստէ։ Թող չխաբուի այնպիսի կեղծաւոր շողոքորթներու սուտ գովեստներուն եւ նենգաւոր դաւաճաններու յուդայեան համբոյրներուն, որոնք իրենց շահասիրութեան եւ անձնական որ եւ իցէ վատ կիրքերուն գործիք ընելէն վերջը պատրաստ են օր մը գահավիժել յանդուգն անարգութեան եւ անպատուութեան։

Օրինազանցին համար սահմանուած այս փոխարինութեանց առհաւատչեայն ամէն օր կընդու-

Նին օրինազանցք, բայց ոչ իրենք կրճգուշանան, եւ ոչ այլք կը խրատուին: Պետք է զգուշանալ, Յա՛րք, ապա թէ ոչ մոտալուտ է այն մեծ եւ բոլորական հարուածը, որ օրէնքն արհամարհողներու համար սահմանած է աստուածային իմաստութիւնը, եւ զոր շատերը կրեցին եւ կը կրեն միշտ, այն է՝ եղծումն եւ ապականութիւն, արհամարհանք եւ անարգութիւն: Շատերուն մեջէն մէկ նշանաւորն ըսեմ: Բարձր-աստիճան եկեղեցական մի, գրեթէ երեսուն տարի յառաջ այս տեղ գտնուելով, մի օր հասարակ միաբաններէն մէկուն հրաման մը կընէ, նա ալ ուրիշ գործի դրկուած լինելով կը պատասխանէ, թէ հիմա ժամանակ չունիմ: Եկեղեցականը, իր հրամանին չկատարուիլը տեսնելով, սաստիկ կը զայրանայ եւ խորխտանօք սպառնալիքներ կընէ, անարգանք եւ լուտանք կը թափէ խեղճին գլխուն եւ յանկարծ պատասխան կընդունի. «Է՛հ, հանդարտ կեցիր, այս տեղ ձեր լեռները չենք»: Վարդապետը թէ եւ նորէն կըսպառնայ, բայց միաբանը առանց մտիկ ընելու արհամարհանօք կը մեկնի: Այս վարդապետը ուրիշ եկեղեցականաց հետ նստաց ատեն սոյն դէպքը վշտագին սրտիւ կը պատմէ եւ վերջը սա նշանաւոր խօսքը կը յաւելու. «Մենք, կըսէ, արժանի ենք արհամարհանաց, եւ տակաւին քիչ է մեզ համար, քանզի իրաւ որ մեր տեղը շատ անվայել կերպով կը

վարուհիք եւ արհամարհանօք կը խօսիւնք մեր ստորագրեալներուն եւ ժողովրդեան հետ, հիմա արդարութիւն է, որ մենք ալ այսպէս անարգուհիք»: Եկեղեցւոյ այս անարժան պաշտօնեայն այս ատենէն մինչ ցարդ կապրի խաբէութեամբ եւ լի անարգանօք. այդ դէպքը թեպէտ զգացած էր, բայց խրատ ըլլալու չափ ներգործութիւն ըրած չէր իր վրայ, ուստի շատ անգամ շատ անարժան գործերու մէջ գտնուեցաւ, յանդիմանուեցաւ, արտաքսուեցաւ առաջնորդութենէ, անարգաբար կրօնափոխութեան դիմեց եւ լրբօրէն քարոզներ տուաւ ի նպաստ Պապական եկեղեցւոյն, յետոյ նորէն ետ դարձաւ, իր ճարպիկ ճարտարութեամբը նորէն պաշտօններու անցաւ, ի վերջոյ յանդուգն անհնազանդութեամբ եւ օրինազանցութեամբ եկեղեցական բարձրագոյն աստիճանի ձգտել յանդգնեցաւ՝ ինքն ընտիր եւ ինքնակոչ լինելով, ամէն ցածութիւն եւ անարգութիւն կրեց եւ այսօր լքեալ, երեսէ ձգուած կը կենայ վանքի մը խորշը: Արդ այս անձը, եթէ առաջին փոքր հարուածներէն խրատուէր, փորձառու լինէր եւ կեանքը կարգադրելով իր կոչման արժանանար, անշուշտ, մեծ պատուոյ պիտի հասներ եւ եկեղեցւոյ մեծ ծառայութիւններ պիտի ըներ, քանզի բոլոր բնական պիտանի ձիրքերով զարդարուած է, բաց ի ստացական կրթութենէ: Այսպէս նաեւ շատերը

պատժուած են եւ կը պատժուին: Բայց երանի՛, թէ այս հարուածները միայն մեր վրայ գային, եւ մեր օրինակովը զեղծանող օրինազանց ժողովուրդը ազատ մնար օրինաց արդար հատուցմունքէն: Այլ յաւիտենական օրէնքը անաչառ է, իր արդարութիւնը ամենուն համար է. նա կը պատուհասէ զամենքն ալ առանց խտրութեան, բայց այն ամենուն պատասխանատուն մենք պիտի լինինք. «Անօրէնը իր անօրէնութեան մէջ պիտի մեռնի, բայց նորա արիւնը քու ձեռքէդ պիտի պահանջուի»:

Մեզմէ ոմանք Աստուծոյ, ատեանէն փոխանակ զԱստուած եւ նորա օրէնքները քարոզելու, շատ անգամ, գուցէ յանգէտս կամ դիտմամբ, անուղղակի, իրենք զիրենք կը քարոզեն, շատ անգամ օրէնքներ կ'եղծեն եւ խեղճ ժողովրդեան ստուգիւն ու գողութիւն ընելու թելադրիչ խօսքեր կը խօսին, որ ոչ Աստուծոյ օրէնքէն է եւ ոչ ուրիշ հաստատուն հիմ մը ունին, այլ լոկ իրենց մոլորութենէն յառաջացած կամահաճ հնարքներ եւ անխոհեմ գիւտեր, զորս իբր իրենց հանճարոյն հրաշալիք կը ներկայացնեն հրապարակ՝ առանց զգալու եւ տեսնելու, թէ ինչ վատ ներգործութիւն կըսէ ժողովրդեան սրտին եւ որչափ կը խանգարէ անոնց բարոյական կենաց ուղղութիւնը: Արդարեւ պէտք է խօսիլ, եկեղեցւոյ բեմէն ի լուր ժողովրդեան կամ առտնին յանկանէ

պետք է քարոզել, բայց միշտ ճշմարտութեան եւ բարոյական ուղղութեան պատկառ կալով եւ ոչ թէ ճարտարութիւն ծախելու համար փեխցփեխ բերնին եկածը դուրս տալով, որոնք եւ Աստուծոյ Յոգին ալ կը թշնամանեն, երբ անմտաբար կըսեն. «Սուրբ Յոգին կը տայ մեզ, եւ մենք ալ ձեզ», բայց Աստուծոյ հոգևով խօսողը Աստուծոյ խօսքը կը խօսի. Սուրբ Յոգին՝ ճշմարտութեան հոգի է եւ ստութեան հետ մասնակցութիւն չունի՛...:

Այո՛, պետք է խօսիլ ճշմարտութիւնն, ըսինք, բայց պետք չէ կարծենք, որ լոկ խօսելով ազատած կը լինինք պարտքէ, ո՛չ: Քանզի մեզ լսողը, եթէ մեր խօսքը մեր գործերով ապացուցուած չտեսնէ, Նորա ճշմարտութեան վրայ կասկածելով չուղղուիր, որով եւ մենք Աստուծոյ խօսքին ազդեցութիւնը ժողովրդեան համար տկարացուցած եւ կը մերժենք ու կը հեռացնենք մեր վրայէն Աստուծոյ թագաւորութիւնը, ուստի եւ արժանի ենք արհամարհանաց:

Ո՛վ Հարք իմ, մանաւանդ դուք, որ բարձր աստիճաններու մէջ գտնուելով իրաւունք ունեցած էք միւս կարգաց ընտրութեան, ձեռնադրութեան եւ անոնց վարուց վրայ, զգոյշ կացէք, որ մի գուցէ ձեր խօսքովն եւ գործքովը առիթ տուած լինիք անոնց մոլութեանց, մանաւանդ խիստ մեծ զգուշութեան կարօտ է ձեր այն ամենավտանգաւոր ընթացքը, որ

մէկուն պատժածը եւ արտաքսածը, միւսնիդ առանց քննութեան կը յարգէք, կը մեծարէք եւ փափուկ պաշտօններ կը յանձնէք եւ վերջը միշտ կը կրէք, թէ դուք եւ թէ ժողովուրդը: Մէկերնիդ կարգէ կը լուծէք, միւսնիդ կարգ կուտաք, իսկ յանցաւորը, կարծես եւ իր վատութիւնն ապացուցանելու եւ կարգէն լուծողին արդարութիւնը հաստատելու համար, կերթայ Նորէն անլուր չարիքներ գործելէ զկնի կրօնափոխութեան անարգութիւնն ալ յանձն առնելու չափ կը ցածնայ յանարգութիւն եւ ի Նախատիւս իր պաշտպանին, ի վնաս եւ ի գայթակղութիւն ազգին: Ահա այս կերպիւ յանցաւոր պաշտօնեաներն անսանձ ազատութիւն գտած են եւ ոչ միայն չեն ուղղուիր, այլ եւ իրենց ըրած ապիրատութիւնները քաջալերուած տեսնելով՝ ա՛լ անելի կը չարանան, որոնց պատճառը դուք եւ ձեր իրարու հետ ունեցած հակառակութիւնն է, որով ժողովուրդը կը հարըստահարի եւ կը թշուառանայ: Ի սերն Աստուծոյ Յա՛րք, պաշտօնեա՛յք եկեղեցւոյ, այս պատկառելի անունը ամօթ թող ազդէ ձեզ, Աստուծոյ օրէնքներուն խոնարհութեամբ հնազանդեցէք եւ ձեր այդ անձնական հակառակութիւններէն մէկդի կեցիք, ափսոս է ժողովրդեան, դուք այդ իշխանութեանց եւ այդ գահերուն վրայ միշտ չէք մնար, բայց ժողովուրդը միշտ կայ, եւ ձեր թողած վատութիւնն ու

լաւութիւնն ալ միշտ պիտի մնայ: Կը խնդրեմ ամենայն ակնածութեամբ, որ առանց գժտմնելու եւ վշտանալու ընթեռնուք, Յա՛րք իմ, ձեր մէկ խոնարհ պաշտօնակցին այն տկար խօսքերը՝ ոչ թէ դատելու համար, այլ օգնելու նպատակաւ ընդունիք զայն: Աղաչենք զսուրբ Յոգին Աստուած, որ մեր ամենուն սրտին վրայ ներգործելով, տպաւորէ իր կամքն ու հաճոյքը, որպէսզի, հետեւելով անոր, ազատ լինիք ամէն տեսակ գերութիւններէ, յորս կաշկանդուած ենք այսօր գրեթէ ամենքնիս ալ:

Բայց եթէ պատահի, որ իմ սիրելի պաշտօնակիցքս այնչափ առաքինացած լինին, որ ազատ համարին զիրենք ամէն տեսակ թերութենէ, եւ ծանր գայ իրենց իմ խօսքերս, այն ատեն ամէն պակասութիւն իմ վրայ կառնում եւ այս ամենը ինձ եւ իմ ուղղութեան համար միայն ըսած կը լինիմ, սրտանց ուրախ լինելով իմ պաշտօնակցացս իմաստութեան, ժրութեան, առատածեռնութեան, խաղաղասիրութեան, խոնարհութեան, պարկեշտութեան, ողջախոհութեան եւ օրինապահութեան վրայ:

Այն ատեն մասնաւոր յօդուածադիրք առիթ չպիտի ունենան մեր վրայ խօսելու համար օտար ազգաց կղերաց վրայ խօսուած եւ գրուած անլուր չարեաց թարգմանիչ լինել, այլ ակնածութեամբ պիտի յարգեն եւ պատիւ պիտի համարին օտարաց

առջեւ մեզ յիշել եւ մեզմով պարծելու, այն ատեն եւ դուք կարօտ չպիտի լինիք քանի մը մուրացիկ լրագրեր վարծելու, որպէսզի զձեզ ստուրթամբ ներքողեն եւ յանիրաւի պաշտպանեն: Քանզի այն ատեն զամեն լեզու ճշմարիտ գովասան եւ զամենայն ոք իրաւամբ պաշտպան պիտի ունենաք, որում ի սրտէ կը տենչայ ինչպէս ամէն ոք, նոյնն եւ ես:

Թերեւս շատերն ըսեն. «Այս ի՞նչ երկու խօսք էր, որ չլրացաւ: Ես ալ կ'աւետեմ անոնց, թէ ահա լրացաւ, սակայն դեռ երկու խօսք ալ չեղաւ: Քանզի նկատելով եկեղեցւոյ պաշտօնէից զեղծեալ վիճակը, տեսնելով անոնց բուն կոչման ներհակ բռնած ընթացքնին եւ առ հասարակ սփռած գայթակողութիւննին եւ քննելով սոցա շարժառիթները, այն ատեն մեր խօսածը կէս խօսք ալ եղած չլինիր, տակաւին, եւ եթէ այսպէս երթայ, դեռ եւս շատ ու շատ պիտի խօսուի: Այլ մենք այս չափը հերիք սեպելով՝ կը լռենք, յիշելով այս տեղ մեր բազմերախտ Յօր՝ Ս. Գրիգոր լուսաւորչի սա հետեւեալ պատուական խօսքը. «Շնորհալից մտաց եւ հաւատացելոց սակաւ բանք խրատուց բաւական են առ ի ուղղութի, իսկ անհաւատից եւ անշնորհաց՝ եւ յովով բանք խրատուց ոչ ինչ օգուտ գործեն, որոնց խաւարեալ են միտք իւրեանց եւ օտարացեալ են ի շնորհաց անտի Աստուծոյ»: Յաճախս:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԳԾԵՐ

ՄԱՄԲՐԷ ԵՊՍ. ՄԱՐԿՈՍԵԱՆԻ

Մամբրէ Եպս. Մարկոսեանը (աւագանի անունով Կարապետ) եղել է Երուսաղէմի միաբան, ծնուել է 1835 թուականին Արաբկիրի Ծագ գիւղում, նախնական ուսումը ստացել է Կ.Պոլսի Ետիգուլէի Սուրբ Փրկիչ ճեմարանում՝ հմտանալով Սուրբ Գրոց եւ հայագիտութեան մէջ: Աւելի ուշ ուսուցչութեան պաշտօն է ստանձնել Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանում, Եսայի Պատրիարքի օրով: 1871-ին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ եւ դարձել Երուսաղէմի միաբանութեան անդամ: Վարել է վանական, վարչական եւ հովուական զանազան պաշտօններ, աչքի է ընկել իր տպաւորիչ քարոզներով եւ մաքրակրօն բարքով: 1885-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ձեռնադրուել է Եպիսկոպոս ձեռամբ Ամենայն Հայոց երանաշնորհ Մակար Կաթողիկոսի, օծակից ունենալով միաբանակից՝ Սահակ Ծ. Վրդ. Խապայեանը:

Մամբրէ Եպս. Մարկոսեանն իր սրբակենցաղ վարքով օրինակելի է եղել Երուսաղէմի միաբանութեան մէջ: Նա նշանաւոր էր նաեւ իբրեւ եկեղեցական նկարիչ, բազմաթիւ սրբապատկերներ ունի Երուսաղէմի Սբ. Յակոբեանց

տաճարում եւ ուրիշ եկեղեցիներում: Վախճանուել է 1907-ին, 72 տարեկան հասակում:

* * *

Մամբրէ Եպս. Մարկոսեանի գրչից դուրս եկած եւ տպագրուած երկերից են՝ «Յառաջադիմութեան մասին», «Աղօթագիրք սրբազան տեղեաց», «Ամէն մարդու բարեկամը», «Սուրբ Երուսաղէմի հայոց ազգային վանուց մասին տեղեկութիւններ»:

«Խօսք եկեղեցական պաշտօնէից»-ը (տպ. 1872 թ.) արդիական է նրանով, որ ժողովրդին հոգեւոր իմաստով բուժելու յարատեւ արտայայտութիւն է, «զննէ՛ք նրա բարոյական վէրքերը», յորդորում է հեղինակը եւ հատու ու ճշմարիտ ձեւակերպումներով ուղենշում այդ նպատակին հասնելու ուղիները: Ծանր բեռ է դնում հոգեւորականի ուսերին. լինել կատարեալ, գիշերն անգամ չքնել՝ հոգալու համար հաւատացեալների հոգսը: Բարդ է, բայց սա է ճանապարհը հոգեւոր կոչման: Հոգեւորականներին իր խօսքով մղում է «անարատ ու ողջամիտ ուսուցչութեան»՝ զգալու համար համեստ ու սուրբ ուրախութիւն այդ պարտաւորութիւնից:

Գրքոյկը վերահրատարակելիս առաջ առաջին հերթին աչքի առաջ ունեցել ենք այն միտքը, որ այն օգտակար կարող է լինել 21-րդ դարի թէ՛ հոգեւորական, թէ՛ աշխարհական ընթերցողներին: Որոշ հատուածներ զեղչել ենք՝ մատենաշարի բովանդակութեանը հարազատ մնալու նպատակով:

Հեղինակի լեզուն գրաբարաձեւ տարրեր ունի, եւ կարծում ենք մեղանշած չենք լինի հեղինակի գրուածքի դէմ, եթէ որոշ ձեւեր ու ոճեր համապատասխանացնենք արդի լեզուին, քանզի նման կերպ ասելիքը հեշտ հասկանալի կը լինի ընթերցողին:

ԱՍՈՅԹՆԵՐ ՄԱՄԲՐԷ ԵՊՍ. ՄԱՐԿՈՍԵԱՆԻ

* Ուրիշին պատիւը չճանչցող և ըստ արժանւոյն անոր շինաչողը ինքն պատիւ չունի և պատուոյ ինչ լինելը չգիտեր:

* Ինչո՞ւ կը վիրաւորէք յամառ կամապաշտութեամբ ձեր եղբօր սիրտը, որոյ համար Յիսուս Քրիստոս արիւն թափած է:

* Անհնար է, որ մարդ հոգևոր պաշտաման մէջ զբաղիլ ուզէ, և «գործ չկայ» ըսէ:

* Մէն մի հոգւոյ փրկութիւնն անգամ մեծ խնամոց և հսկողութեան կը կարօտի:

* Ժողովուրդն իր պատուոյն և իր փառաց համար մեզ կը փառաւորէ, կը բարձրացնէ, և մենք այն պատիւը մեզ սեպհականելով՝ ժողովուրդը կը մոռնանք:


* Այն աթոռները, զոր այսօր եկեղեցւոյ պաշտօնեաներն ընտրած են, այնտեղ շքեղապէս կը բազմէր Յիսուս, երբ երկնային ճշմարտութիւնը և ընկերային պարտքերը կ'ուսուցանէր ժողովրդեան:

* Պաշտօնեայի վեհութիւնը խոնարհութեան և քաղցրութեան մէջ է, իր փառքն ու պատիւը՝ իր պաշտամանց անթերի կատարման մէջ է, իր պարծանքը՝ իր գործոց արդիւնքն է, և իր բարձրութիւնը Աստուծոյ օրինաց պահպանութեան մէջ է:


* Հասարակաց վրայ հոգ ու խնամք տանելու պաշտօնն ունեցողին չի վայլեր, որ գիշերն ի լոյս ննչէ:

«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵԼԱՇԱՐՈՎ ՏՊԱԳՐՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ա. Յովհանն Ոսկեբերան, Ապաշխարութեան պատուհներ (Քարոզներ եւ Ճառեր), 2019




Բ. Յակոբ Նալեան, Առաքինի կեանքի ուղին (Հոգեւոր գրույցներ), 2020



Ե. Գարեգին Եպս. Խաչատուրեան, Հովիւի Խօսքեր, 2021

«ՈՍԿԵՂՆԻԿ» ՄԱՏԵԼՆԵՐ - Ե



- Հասարակ լուսն փրոջ և անմոխթութեան մէջ է:
- Ո՛վ կրնայ հշմարտապէս փրկել առանց փրոջ խաղը կրկու, սարսաղով է խաբկին իր անն ու ունեցածը:
- Ներդաստնութիւնը կը դարձնայ սեզօք իմ, որ բարոյրինն ու հշմարտութիւնը կը խախտուին ու կը խախտուին գիտակցօրն:
- Սեր զարց լու կը արահանցէ:
Բայց որքա՞ն խաւար ունի դեռ «այս աշխարհօք»:
- Գեանքը միշտ վերկը Լ անդարար սուկի վեր՝ դեպի արքիոյր անսպառ Լոյսին:

ԳԼԵԳԻՆ ԵՊՍ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ


ԳԼԵԳԻՆ ԵՊՍ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
ՀՈՎԻՒԻ ԽՕՍՔԵՐ

Զ. Պաղտասար Դպիր, Գրքոյկ շահաւէտ, 2022

«ՈՍԿԵՂՆԻԿ» ՄԱՏԵԼՆԵՐ - Զ

- * Վերին ընկերօջ: Ապս թէ՛ ոչ՛ գուր են ջանքերդ և գուր են արջօքներդ:
- * Հնարքիս մարդու մէկ խօսքն առտուի վտանհիք Լ քան ստախօս մարդու կրկուսմեքը:
- * Անկի մըլտ Լ միշտ պարտաւատ ու պահած ունենալ ստոր, թան թէ՛ ապտուլ միջեւ թշնամու գալու պտեր, ոչ՛ կնիք թէ՛ յանկարծ թշնամի գաւ, և՛ ի վնակի շիննս փոստով սուզը մեքոյ ստնալու:
- * Լախաննէ դեղը ներարայտութիւնն է, ծուրութեան դեղը՝ արխորներ, ազատութեան դեղը՝ ներարայտութիւնը ևս ողորմանօքիկնը:
- * Մտածուէ՛ք, ներարներ, զարքե՛ք այս մանաքեր թնկ, քանիք Տիրոջ զրո գաղտնագրօքի՛ փայ հասնելու:

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ



ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ
ԳՐԸՈՅԿ ԾԱՀԱՒԷՏ

Է. Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցի, Աստուածային Շնորհների Դուռը, 2023

«ՈՍԿԵՆՆԻ» ՄԱՅՆԱԾՐԱԲ Է

ԴՈՒՐԻՆ ԱՄՅՈՒՄԵՐԱՆՆԵՐ ԸՆՈՐԾՆԵՐ

«Սուրբ Հուլիոս բարեպաշտման շարժմանը՝ սխալ բազմաթիվ կեանքի գնահատման, որպեսզի գնահատվեն վերին կրթությունները»

«Էյն սուրբապաշտությունը նաև ուսմանը մի գրու, սովոր, սովորեցնել և սովորեցնել յարմարեցնել կեանքի ժամանակակիցը, այն զեղարարել, երբ աշխարհապաշտման ու մեղադատությունները գրուը բաց և ընդարձակ է, սակայն սահման է կրթական՝ գեղեցիկ յարմարեցնել գրուսուրբապաշտությունը»

Մատթէոս Ա. Կոստանդնուպոլսեցի



ՄԱՅՈՒՄ Ա. ԿՈՍՏԱՆԴՆՈՒ ՊՈԼՍԵՐ

ԴՈՒՐԻՆ
ԱՍՏՈՒԿԱԾՆԵՐ ԸՆՈՐԾՆԵՐ

Ը. Մամբրէ Վրդ. Մարկոսեան, Խօսք Եկեղեցւոյ պաշտօնէից, 2024

«ՈՍԿԵՆՆԻ» ՄԱՅՆԱԾՐԱԲ Է

ՄԱՅՈՒՄ ԱՄՅՈՒՄԵՐԱՆՆԵՐ ԸՆՈՐԾՆԵՐ

«Կրթութիւնը և կրթութեան արժեքները, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են»

«Կրթութիւնը և կրթութեան արժեքները, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են»

«Կրթութիւնը և կրթութեան արժեքները, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են»

«Կրթութիւնը և կրթութեան արժեքները, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են»

«Կրթութիւնը և կրթութեան արժեքները, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են»

«Կրթութիւնը և կրթութեան արժեքները, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են»

«Կրթութիւնը և կրթութեան արժեքները, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են, որոնք կրթութեան արժեքներն են»



ՄԱՅՈՒՄ ՎՐԴ. ՄԱՐԿՈՍԵԱՆ

ԽՕՏԻՔ ԵԿԵՂԵՑՎՈՅ ՊԱՇՏՈՆԷՒԿԻՑ

«Ոսկեդենիկ» մատենաշար – Ը

ՄԱՄԲՐԵ ՎՐԴ. ՄԱՐԿՈՍԵԱՆ
ԽՕՍՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏՕՆԵԻՑ

Տպագրութեան պատրաստեց՝ Բանասիրական գիտ.
թեկնածու, դոցենտ Նորայր Պողոսեանը



Տպագրութիւն ԱՄՆ Արեւմտեան թեմի
Լոս Անջելէս - 2024